Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր - 2020

«Քաղաքական հռետորաբանությունը և դրա փոփոխությունները ետհեղափոխական Հայաստանում. կիրառական դիտանկյուն»

Մխիթար Ռ. Գաբրիելյան
ազգագրագետ

ԵՐԵՎԱՆ - 2020

Բովանդակություն

«Քաղաքական հռետորաբանությունը և դրա փոփոխությունները ետհեղափոխական Հայաստանում. կիրառական դիտանկյուն»....1

1. Ներածություն....3

2. Իրավիճակի նկարագրություն....8

3. Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը....14

3.1 Նպատակ և խնդիրներ....14

3.2 Ժամանակացույցը, մեթոդաբանությունը....15

4. Արդյունքների վերլուծություն....17

4.1 «Ժողովուրդ» և «քաղաքացի» հասկացությունները քաղաքական դիսկուրսում ու հռետորաբանությունում. փոփոխությունները, պատճառներն ու դրսևորումները մինչև հեղափոխությունը և հետագայում....21

4.2 Հռետորաբանության փոփոխությունը. «հեղափոխություն» VS «կառավարում»....35

4.3 Ազգայինը, ազգայինի ու քաղաքացիականի համադրման դիսկուրսը: Բանակը՝ որպես ազգայինի ու քաղաքացիականի համադրման կարևոր ինստիտուտ:....39

5. Եզրակացություններ....46

6. Առաջարկություններ և շահառուներ....48

Հավելված 1. Հիմնական հետազոտական հարցադրումները....50

1. Ներածություն

2018թ. «Թավշյա հեղափոխություն»-ից հետո Հայաստանում ծավալվող իրադարձությունների ամբողջական ուսումնասիրությունը միայն մեկ գիտակարգի միջոցով և վերջինիս տեմինաբանությամբ, բավականին բարդ է: Զարգացումները, փոփոխությունները համակարգային են, բազմամակարդակ, ազդում են քաղաքական ու հանրային բոլոր ոլորտների վրա. բնապահպանությունից ավիահաղորդակցություն, կրթությունից առողջապահություն[1]:

Փոփոխությունների ընկալման ու ներկայացման հասարակական–մշակութային «ներկապնակն» ավելի հարուստ է: Այստեղ քաղաքագիտական, իրավագիտական, տնտեսագիտական երբեմն՝ չոր ու բարդ որակումներին ավելանում է զգացմունքային մակարդակը, տեղի ունեցածի բնութագրումների՝ ծայրահեղությունից-ծայրահեղություն ցրվածությամբ. մեկ հարթությունում ***«սիրո, համերաշխության, մաքուր ու պարզած ձեռքերի*** հեղափոխություն»[2] որակումն է, մյուսում՝ ***«աննախադեպ ատելության, բռնության, սևի ու սպիտակի բաժանման»***[3] իրավիճակ ձևավորած իշխանափոխություն» որակումը:

2018թ. իրադարձություններից բավականին քիչ ժամանակ է անցել: Չնայած սրան, արդեն կարելի է հանդիպել են հեղափոխության ուսումնասիրության ու գնահատման տարբեր փորձերի, հրապարակի վրա են առանձին վերլուծություններ, հեղափոխության հաջողության պատճառների տարբեր առումների դիտարկումներ:[4]

---

[1] Այս ոլորտները շեշտադրում ենք, քանի որ հանրայի դիսկուրսում շատ հաճախ հենց սրանց հետ են ասոցացվում հեղափոխության հաջողությունները կամ տապալումները. Ամուլսարի շահագործում, կրթական ոլորտում՝ ազգային և ապազգայինի պայքար, համավարակի պայմաններում առողջապահական քաղաքականության արդյունավետություն, հայկական ավիաընկերությունների՝ դեպի ԵՄ թռիչքի իրավունքի կասեցում: Եթե իշխանություններն առկա խնդիրները, որպես կանոն, փորձում են բացատրել «նախկինների» սխալներով, ապա ընդդիմադիրների հակափաստարկն այն է, որ երկու տարին բավարար ժամանակ է սխալները շտկելու համար:

[2] Այս ձևակերպումները հանրային դիսկուրսում ամենից ակտիվ ու նպատակա ուղղված շրջանառում է հատկապես վարչապետ Ն. Փաշինյանը:

[3] Նման ձևակերպումներ կարելի է տեսնել ՀՀԿ-ն ներկայացնող քաղաքական գործիչների՝ Ա. Աշոտյան, Է. Շարմազանով, Ա. Հովհաննիսյան, որոշ իրավիճակներ բնութագրելիս նաև ԲՀԿ-ական և ՀՅԴ գործիչների ձևակերպումներում:

[4] Տես օրինակ՝ Մ. Դեմիրճյան, Թավշյա հղափոխություն. հայկական տարբերակ//http://ysu.am/files/2-1548137198-.pdf (ստուգվել է 12.09.2020); Մ. Վարդազարյան, Ե. Վարդազարյան, Հայոց «թավշյա հեղափոխությունը» և ՀՀ-ՌԴ հարաբերությունների զարգացման դինամիկան//http://ysu.am/files/01M_Vardazaryan_E_Vardazaryan.pdf: Հեղափոխությունից բառացիորեն ամիսներ անց լույս տեսավ նաև քաղաքագետ Ստ. Գրիգորյանի գիրքը, որ հրատարակվեց նաև ռուսերեն: տես՝ Ս. Գրիգորյան, Հայկական թավշյա հեղափոխություն, Եր., 2018:

Հրապարակախոսական նյութերի, հանրային քննարկումների պակաս ընդհանրապես չի զգացվում։

Իրականում, չնայած վերլուծությունների որոշակի թվին, իրավիճակի յուրօրինակությունը, զարգացումների և վերջիններիս շուրջ դիսկուրսի բազմազանությունը հրամայական է դարձնում համալիր, միջգիտակարգային հետազոտությունների իրականացումը։ Հեղափոխության և ետհեղափոխական շրջանի զարգացումները համակարգային բնույթ ունեն։ Դրանք հասկանալու, կիրառական տեսանկյունից առաջարկություններ ներկայացնելու, ռազմավարական պլանավորման մակարդակում խնդիրներ լուծելու տեսանկյունից, ինչպես ցույց է տալիս նաև միջազգային հետազոտությունների փորձը, արդյունավետ են բազմագիտակարգային, կիրառական ուղղվածության ուսումնասիրությունները։ Առանց ազգաբանական/մարդաբանական, հոգեբանական, սոցիոլոգիական, փիլիսոփայական ու այլ գիտակարգերի տեսական-մեթոդաբանական գործիքակազմի ու հետազոտական հարցադրումների փոփոխությունները որպես համակարգային, համալիր գործընթաց դիտարկելը, ըստ էության, դառնում է անհնարին։

Այս մոտեցումը թույլ է տալիս որոշակիորեն ընդլայնել նաև 2018թ. իրադարձությունների բովանդակային ու ժամանակագրական ընդգրկումը։ Ճգնաժամն ու այն ձևավորած համակարգի դեմ ուղղված շարժումը 2018թ. չէ, որ սկզբնավորվեցին. ճգնաժամի խորքային, համակարգային բնույթն ակնհայտ էր դեռևս մինչև 2018թ։ «Ելք» դաշինքը, որ 2017թ. ընտրություններից արդյունքում ներկայացված էր խորհրդարանում, նախորդիվ՝ Հայ ազգային կոնգրեսը, արտախորհրդարանական ընդդիմությունն ու փորձագիտական հանրությունը տարիներ շարունակ արձանագրում էին համակարգային ճգնաժամի իրողությունը, կոռուպցիայի, հովանավորչության, ընտրակեղծիքների, պետական սեփականության յուրացման գործընթացի կազմակերպված, համակարգային բնույթը։ Թե որքանով էր այս ամենը փաստարկվում, այլ խնդիր է։

Քաղաքական գործունեության, քաղաքական հռետորաբանության մակարդակներում, համակարգային ճգնաժամի պայմաններում, երբ ընդդիմությունը զրկված է գործընթացների վրա էական ազդեցության հնարավորությունից, միակ արդյունավետ գործիքը մնում է տոտալ, կոշտ քննադատությունը, որ երբեմն անցնում է թույլատրելիի սահմանները։ Այն խորացնելով հասարակության ընդդիմադիր տրամադրությունները, անխուսափելի դարձնելով միայն իշխանափոխության, համակարգային փոփոխությունների միջոցով զարգացում ապահովելու գաղափարները, միաժամանակ, մեծացնում է այս գաղափարների գեներացիայի ու դրանց շուրջ քաղաքացիական շարժումները կազմակերպելու ներուժը։ Ն. Փաշինյանը, որպես փորձառու քաղաքական գործիչ, ունենալով նաև քաղաքական ու խղճի բանտարկյալի

հանրային ընկալում, հաջող կերպով գեներացնում էր հանրային տրամադրությունները, որոշ դեպքերում՝ ուղղորդում դրանք։

Հանրային տրամադրությունների գեներացիայի ու քաղաքացիական անհնազանդության շարժումների ծավալման համար միայն քննադատությունը, թեկուզ կոշտ ու թույլատրելիի սահմաններն անցնող, դեռևս բավարար չէ։ Անհրաժեշտ է տարբեր հանգամանքների բարենպաստ ու բավարար զարգացում։ 2017-2018թթ. հենց այս փուլն էր. ընդդիմադիր գաղափարների գեներացիայի հնարավորությունների դաշտը կտրուկ ընդլայնվեց, քանի որ Հայաստանը թևակոխեց *«Սերժ Սարգսյանի» ապագայի պայմանական շրջափուլ,* որի իմաստը երրորդ նախագահի, ըստ այդմ՝ 2017թ. ընտրություններում մեծամասնություն ստացած Հանրապետական կուսակցության քաղաքական ապագայի բանաձևումն էր։[5] Սա այն ժամանակահատվածն էր, երբ ընդդիմադիր քաղաքական դաշտն ու հասարակությունը սպասում էին Ս. Սարգսյանի հայտարարությանը, որ պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո չի ստանձնելու վարչապետի պաշտոնը։ Նման հայտարարություն, սակայն, չինչեց ու Ն. Փաշինյանն ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ինչպես նաև այլ ուժեր նախաձեռնեցին պայքարի հերթական, իրականում բովանդակային տեսանկյունից նոր փուլ՝ *նախընթաց գաղափարների ու սկզբունքների կարևորմամբ։*

Հիմնական քարոզչական տեխնոլոգիան, որ կիրառվում էր այս փուլում, ՀՀ քաղաքացու մասնակցությունը որպես հաղթանակի կարևոր նախապայման հանրայնացնելն էր։ Գյումրիից արված պայմանական առաջին քայլից սկսած գործընթացն այլևս մասնակցային էր. *չկար որևէ պարտադրանք ու դեպի Երևան ճանապարհին «քայլողներին» միանում էին կամավոր, սեփական ցանկությամբ։*

Մասնակցայնության շեշտադրմանը զուգահեռ, երբ դեռևս հատուկենտ մարդիկ էին հավատում նախաձեռնության հաջողությանը, Ն. Փաշինյանի և նրա քաղաքական համախոհների ընդդիմադիր, ծայրահեղ քննադատական հռետորաբանությունը ավելի խստացվեց, աստիճանաբար դառնալով հանրահավաքային պայքարին ավելի համապատասխանող։ Խստացնելով ու խորացնելով քննադատությունը, ընդդիմությունը մեկ այլ տեխնոլոգիական հնարք էլ կիրառեց. Ս. Սարգսյանի հեռանալու պահանջը, ընդդիմության ձևակերպած դիսկուրսում ու հռետորաբանությունում այլևս դադարել էր սոսկ անձի հեռացման պահանջ լինելուց, տեղափոխվելով համակարգային, *քաղաքացիական, հասարակական-մշակութային, լայն առումով՝ մտածողության և աշխարհայացքային հարթություն։* Մտածողության, աշխարհայացքային

[5] Խորհրդարան անցած չորս ուժերը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, «Ծառուկյան» դաշինքը, «Ելք» դաշինքն ու «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը համապատասխանաբար ստացել էին 58, 31, 9 և 7 մադատ։ https://www.azatutyun.am/a/28419507.html

տարբերությունների վերաբերյալ հռետորաբանությունն ու նարրատիվը, շարժման կողմնակիցների աճին զուգընթաց, ավելի էին հստակեցվում, կարևորվում, դարձվում շարժման թիվ 1 օրակարգ. *Ս. Սարգսյանի հեռացումը այլևս դիտվում էր որպես համակարգային «փրկության» գործողություն, որը քաղաքական կյանք կվերադարձնի հիմնական դերակատարին՝ քաղաքացուն:*

Պատահական չէ, որ և շարժումը և հեղափոխության հաղթանակից հետո սկիզբ առած փոփոխությունները միանշանակ ներկայացվում էին/են որպես *քաղաքացու և քաղաքացիական շարժումներ, քաղաքացու հաղթանակ, հանուն քաղաքացու հաղթանակ:*

Այս բովանդակությամբ ձևակերպումները Ն. Փաշինյանի՝ վարչապետ ընտրվելուց, հետագայում՝ խորհրդարանում մեծամասնություն ձևավորելուց հետո տեղ գտան պետական քաղաքականության փաստաթղթերում՝ կառավարության տարեկան ծրագրեր[6], ռազմավարական, զարգացման փաստաթղթեր[7], հայեցակարգեր, ոլորտային փաստաթղթեր: Դրանք օրակարգային են նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, «Իմ քայլը» դաշինքի փաստաթղթերում:[8]

Միայն «տեքստը» չէ, սակայն, որ առատ է նման ձևակերպումներով: «Խոսքը», ավելի ճիշտ՝ դիսկուրսը, խոսույթը, որ ուսումնասիրվեց հետազոտության ընթացքում, նույնպես կառուցարկվում, հանրայնացվում է այս հարթությունում: Հիմնականում այս համատեքստում են պատգամավորների, նախարարների, մարզպետների, համայնքների ղեկավարների քաղաքական ելույթները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս ամենը *հանրային ընդհանրական դիսկուրսի* մի մասն է: Դիսկուրսի բովանդակության գեներացիան ետհեղափոխական Հայաստանում դեռևս Ն. Փաշինյանի «մենաշնորհն» է և ըստ անհրաժեշտության և լսարանի, կարևորվում է հեղափոխության այս կամ այն

---

[6] ՀՀ Կառավարության 2018 և 2019թթ. ծրագրերում ներառված է «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» բաժինը, ինչն, ըստ էության, վավերացնում է քաղաքացու՝ հեղափոխական դիսկուրսի սուբյեկտից պետաան քաղաքականության սուբյեկտ դառնալու իրողությունը: Տես՝ ՀՀ Կառավարության 2018թ. ծրագիր//https://www.gov.am/files/docs/2782.pdf; 2019թ. ծրագիր//https://www.gov.am/files/docs/3133.pdf: (ստուգվել է 12.09.2020):

[7] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության 6 և 7 բաժիններում նույնպես մանրամասն անդրադարձ կա քաղաքացու իրավունքների, շահերի ու պարտականությունների հարցերին: Տես՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, Եր. , 2020: https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf (ստուգվել է 12.09.2020):

[8] Տես՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պաշտոնական էջը. https://www.civilcontract.am/ (ստուգվել է 12.09.2020): Հենց առաջին էջի կարգախոսը «Երջանիկ անհատ, հոգատար հանրություն, հզոր պետություն» խտացնում է այն գաղափարախոսական ու աշխարհայացքային հենքը, որ ընկած է կուսակցության գործունեության/ հասարակական – քաղաքական դաշտում դիրքավորման հիմքում: Նույն ձևակերպումները տեղ են գտել նաև «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում: Տես նաև՝ «Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ծրագիր» https://www.civilcontract.am/%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80:

առումը, արդյունքը, հետևանքն ու փոփոխությունը։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հիմնականում լսարանն է պայմանավորում, օրինակ «քաղաքացի», «ժողովուրդ», «ազգ», «բանակ» ու այլ հասկացությունների գործածման հաճախականությունն ու բովանդակությունը։

Հետազոտության նախագծման ու փաստաթղթերի ուսումնասիրության փուլում մենք բավարար համոզում չունեինք դիսկուրսի, քաղաքական հռետորաբանության նկատելի փոփոխություններ դիտարկելու խնդրում։ Ենթադրում էինք, որ փոփոխությունները, նույնիսկ եթե առկա են, բավարար չեն փուլեր ու ենթափուլեր առանձնացնելու համար։ Հետազոտությունը, սակայն, ցույց տվեց հակառակը. չնայած կարճ ժամանակահատվածին (շուրջ 2 տարի), քաղաքական հռետորաբանությունը ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որ հնարավոր են դարձնում թեկուզ նախնական փուլաբաժանումը։

Ընդ որում, փոփոխությունները միայն «Քաղաքացիական պայմանագիր կուսակցության», «Իմ քայլը» դաշինքի և Ն. Փաշինյանի «պլանավորմամբ» պայմանավորված չեն։ Հռետորաբանության ու դիսկուրսի փոփոխության վրա ավելի ակտիվ է սկսում ազդել մի կողմից ընդդիմադիր դաշտի հռետորաբանությունը և մյուս կողմից՝ բազմազանեցումը, ընդդիմադիր նոր սեգմենտների ձևավորումը։ Եթե ետհեղափոխական առաջին ամիսների էյֆորիայի պայմաններում դիսկուրսն ու նարրատիվը հիմնականում «ներկա-նախկին» (Քաղաքացիական պայմանագիր-Հանրապետական կուսակցություն) հակադրության, ինչպես նաև քաղաքացու ու հեղափոխության գերկարևորման տիրույթում էին, ապա հետագայում սրան ավելացել է ևս մեկ սեգմենտ. կուսակցություններ, որ դիրքավորվում են որպես ընդդիմություն և իշխանությանը և նախկիններին, հետևաբար՝ խոսքը կառուցում ու հանրայնացում և նախկինների և ներկաների գործունեության քննադատության համատեքստում։ Ավելի քննադատական ու թիրախավորված է դառնում մեկ այլ սեգմենտի՝ հեղափոխության համակիր ինտելեկտուալների խոսքը, որը խմբագրումներ է մտցնում և առաջիկայում էլ մտցնելու է իշխանության քաղաքական հռետորաբանությունում։

Սույն հետազոտությունն, ըստ այդմ, իրականացվել է նկարագրվածը՝ այսինքն ետհեղափոխական քաղաքական, սոցիալ-մշակութային զարգացումները քաղաքական հռետորաբանության և քաղաքական դիսկուրսի տեսանկյունից ուսումնասիրելու նպատակով։ Դիսկուրսի, հռետորաբանության, նարրատիվի ուսումնասիրությունը սոսկ գիտական, ակադեմիական հետաքրքրությունների շրջանակում չէ։ Այն ունի կիրառական նշանակություն քաղաքագիտական, հասարակագիտական ու մշակութաբանական-մարդաբանական դիտանկյուններից։

Հետազոտության ընթացքում, բնականաբար, ոչ բոլոր հարցերն է հնարավոր ամբողջությամբ ուսումնասիրել: Արտակարգ դրությունն իր դերը խաղացել է, չնայած որ ուսումնասիրված ժամանակահատվածը, հենց համավարակի իրողությամբ պայմանավորված, սահմանափակվել է 2020թ. ապրիլով:

Ըստ այդմ ***«Քաղաքական հռետորաբանությունը և դրա փոփոխությունները ետհեղափոխական Հայաստանում. կիրառական դիտանկյուն»*** վերնագրով հետազոտությունը, նպատակ ունի ուսումնասիրել և վերլուծել իշխող ուժի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Իմ քայլը» դաշինքի՝ ***քաղաքացիության ինստիտուտին վերաբերող նարրատիվն ու քաղաքական հռետորաբանությունը 2018-2020թթ.,*** հասկանալու համար, թե որքանով է իշխող քաղաքական ուժը մի կողմից կայուն իր իսկ ձևակերպումների տրամաբանությանը հավատարիմ մնալու առումով և մյուս կողմից՝ հետևողական, դրանք հանրային կյանքի կարևոր բաղադրիչ դարձնելու հարթությունում:

Քանի որ քաղաքական հռետորաբանությունը անձնավորված է ու որոշակիորեն անձնակենտրոն, իսկ ուսումնասիրությունն էլ ցույց տվեց, որ գեներացիայի «մենաշնորհը» դեռևս Ն. Փաշինյանինն է, վերլուծվել է հիմնականում վերջինիս խոսքը:

2. Իրավիճակի նկարագրություն

Հայաստանում ***քաղաքական տեքստի***՝ *նախընտրական ծրագրեր,* կուսակցական, պետական քաղաքականության, այլ փաստաթղթեր և ***խոսքի անհամապատասխանությունը*** կամ հանրային դիսկուրսը անհամապատասխանության վերաբերյալ, կարելի է ասել, ծնունդ է առել հենց հանրապետության հետ: Բացառություն են թերևս 1990-ական թթ. սկզբի նախագահական և խորհրդարանական ընտրությունները, որ բողոքների ու ընդվզման պատճառ չդարձան: Վիճակը, սակայն, շատ արագ փոխվեց ու 1996թ. նախագահական ընտրություններից սկսած գրեթե չկա արդյունքների տեսանկյունից վիճահարույց չհամարվող որևէ համապետական ընտրություն:[9] Բոլոր համապետական ընտրություններին, ավել կամ պակաս ակտիվությամբ և տևողությամբ, հետևել են ցույցեր, միտինգներ, արդյունքների վիճարկման գործընթացներ տարբեր ատյաններում: Ընդվզումն ու բողոքը, որ արձանագրվում էին, ***խոսքի***՝ արդար, ազատ, թափանցիկ ընտրություններ անցկացնելու վերաբերյալ իշխանությունների խոստումների և ***գործի/գործողությունների***՝ ահաբեկումներ, ընտրակաշառք, վարչական ռեսուրսի

[9]«Հետահայաց». թե ինչպես էր Հայաստանն ընտրում նախագահ https://armenpress.am/arm/news/708587 (ստուգվել է 04. 09. 2020թ.)

կիրառում, սպառնալիքներ, ***անհամապատասխանության ծնունդ էին:*** Վերջին՝ հեղափոխական փոփոխությունների հանգեցրած գործընթացի հիմքում ևս տեքստի/խոսքի և գործի անհամապատասխանությունն էր:[10]

Իրավիճակը, երբ հայտարարվում է մի բան, սակայն կատարվում/հասարակությանն է առաջարկվում այլ տարբերակ, այսպիսով Հայաստանում նոր չէր ու ուներ տասնյակ դրսևորումներ: Հիշենք թեկուզ Ս. Սարգսյանի՝ 2013թ. նախագահական ընտրությունների ընտրարշավի շրջանակներում Շիրակի մարզում արված աղմկահարույց հայտարարությունը *«…ինչքան (ընտրությունների ժամանակ քանի տոկոս – Մ. Գ.) ուզես, էդքան խփենք»*:[11] Ս. Սարգսյանի նախագահության երկրորդ շրջանում «…էդքան խփելու» մտայնությունն ավելի խորացավ ու գագաթնակետին հասավ 2017-2018թթ.: Հաղթանակը խորհրդարանական ընտրություններում, Սահմանադրական փոփոխություններն ու անցումը կառավարման նոր մոդելի ՀՀԿ-ի ներսում ու քաղաքական դաշտում ընդհանրապես, օրակարգային դարձրին լիդերի ու վերջինիս քաղաքական ճակատագրի խնդիրը:

Ս. Սարգսյանը երրորդ անգամ նախագահ առաջադրվելու իրավունք չուներ և ըստ այդմ որպես հաղթած ուժի ղեկավար կամ դառնում էր վարչապետ, կամ մնալով կուսակցության ղեկավար, իրականացնում ստվերային կառավարում: 2017-2018թթ.-ի այս իրավիճակը համակարգի վերարտադրության ցանկության, իրականում՝ համակարգային ճգնաժամի ու հիվանդության վկայությունն էին, երբ ակնհայտ էր, որ համակարգը և համակարգի մաս լինելով պայմանավորված ոչ ֆորմալ արտոնությունները պահելու ու վերարտադրվելու ցանկությունը դարձել էին դոմինանտ բոլոր այլ գործոնների նկատմամբ: Քաղաքական թիմի և քաղաքականությանը սերտաճած բիզնեսի՝ ապագայի երաշխիքներ ունենալու ցանկությունը որոշ վերլուծաբաններ բացատրում էին Ս. Սարգսյանի անկանխատեսելի բնավորությամբ, ինչին ավելի վաղ ականատես եղել էինք: Դա Մաքսային միությանը, հետագայում՝ ԵՏՄ-ին միանալու մասին հայտարարությունն էր 2013թ. սեպտեմբերին, որ հնչեցվեց Մոսկվայում, ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ բանակցություններից հետո: Այն անսպասելի, եթե չասենք շոկային էր հայաստանյան քաղաքական էլիտայի համար. 2013թ. նոյեմբերին Վիլնյուսում նախատեսվում էր Ասոցացման մասին համաձայնագրի ստորագրումը: Դրանից երկու ամիս առաջ, Մոսկվայում ասուլիսի ժամանակ, ի թիվս այլ խնդիրների, ասես ամենևին չկարևորելով ասելիքը, Ս. Սարգսյանը հնչեցրեց հետևյալը. *«Մենք հանգամանալի քննարկում անցկացրեցինք նաև եվրասիական ինտեգրացիայի հարցերի վերաբերյալ, և ես*

[10] Բնական է, որ մենք գիտակցում ենք իրավիճակի անհամեմատ ավելի բարդ ու խորքային լինելը: Այս դեպքում խոսքի ու գործի անհամապատասխանությունը դառնում է իրավիճակի լավագույն խտացումը:
[11] «Ինչքան ուզես, էնքան խփենք. Ս. Սարգսյան» https://www.youtube.com/watch?v=f6eROH7sfXw:

հաստատեցի Հայաստանի ցանկությունը՝ միանալու Մաքսային միությանը և ներգրավվելու Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացում»: Հիշեցնենք, որ մինչ այդ Հայաստանում ակտիվ քննարկում այս ուղղությամբ չէր եղել, իսկ վարչապետ Տ. Սարգսյանը և փոխարտգործնախարար Շ. Քոչարյանը հանրային խոսքում բացառել էին Մաքսային միությանն ու ԵՏՄ-ին անդամակցության հնարավորությունները տարբեր պատճառներով:[12]

2018թ. տեքստի և խոսքի անհամապատասխանությունը վերաբերում էր արդեն այլ խնդրի. Ս. Սարգսյանի, Հանրապետական կուսակցության, լայն առումով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքական ապագային: 2014թ., երկրորդ անգամ նախագահ ընտրվելուց ավելի քան մեկ տարի անց Ս. Սարգսյանը հանդես էր եկել հետևյալ հայտարարությամբ. *«Եվ ձեր առաջ, քննարկումների փուլն սկսելուց առաջ, պաշտոնապես հայտարարում եմ, որ ես, Սերժ Սարգսյանս, այլևս երբեք չեմ առաջադրվելու Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնի համար: Եթե վերջնական քննարկումների արդյունքում իմ ցանկությանը չհամապատասխանող ուղի ընտրվի, նկատի ունեմ պառլամենտական կառավարման մոդելը, ապա ես չեմ հավակնի նաև վարչապետի պաշտոնին: Վստահ եմ անգամ, որ մեկ մարդը երկու անգամից ավել իր կյանքում չպետք է հավակնի ընդհանրապես երկրի կառավարման ղեկին Հայաստանում:*[13] Չնայած հայտարարությանը, 2017-2018թթ. քաղաքական ու հանրային դաշտի մտահոգությունները խորանում էին, որովհետև չկար վերահաստատումը: Աճում էր մտայնությունը, որ Ս. Սարգսյանը գնում է «երրորդ ժամկետի», որպես Հանրապետական կուսակցության՝ ընտրություններում մեծամասնություն ստացած ուժի առաջնորդ հավակնելով վարչապետի պաշտոնին:

2018թ. ապրիլի 17-ի ԱԺ հատուկ նիստում, երբ սկսվել էր նաև քաղաքացիական ընդվզումն ու Հայաստանում բողոքի ցույցեր էինն, Ս. Սարգսյանը, իր խոսքին բնորոշ բազմիմաստությամբ, տվեց վարչապետ դառնալու որոշման հիմնավորումը. *«…Այս համակարգի պայմաններում վարչապետ է դառնում խորհրդարանում մեծամասնություն կազմած քաղաքական ուժի ղեկավարը, և դա պատահական չէ: Դա կոչված է նաև ապահովելու քաղաքական լիդերի անձնական պատասխանատվությունը տվյալ*

---

[12] Վարչապետ Տ. Սարգսյանն իր հարցազրույցներից մեկում ասել էր. *«Խնդիրը միայն ընդհանուր սահմանի բացակայությունը չէ: Հայաստանի առանձնահատկությունը նաև տնտեսության կառուցվածքի մեջ է, որը խիստ տարբերվում է Մաքսային միության երկրների տնտեսությունների կառուցվածքից: Այդ երկրները էներգետիկ ռեսուրսների նշանակալի պաշարներ ունեն, բացի այդ, տեղական արտադրողի պաշտպանությունն այդ երկրներում իրականացվում է մաքսային բավականաչափ բարձր վճարների միջոցով: Ընդհանուր առմամբ, այդ մաքսավճարները կրկնակի ավելի են Հայաստանում սահմանված համանման վճարներից»:* https://www.azatutyun.am/a/25112068.html:

[13] Թավշյա հեղափոխություն (Հայաստան) https://hy.wikipedia.org/wiki/ :

քաղաքական ուժի համար: Հայաստանի պարագայում սխալ, հակահամակարգային եմ համարում այսպես կոչված թաքնված կառավարման մեխանիզմները…

Այդ դեպքում հարց է առաջանում՝ միթե՞ չէի կարող կանխատեսել այս օրը սահմանադրական բարեփոխումների հենց ամենասկզբում, երբ հայտարարում էի, որ պառլամենտական կառավարման մոդելին անցնելու դեպքում չեմ հավակնի վարչապետի պաշտոնին: Իհարկե, կանխատեսում էի և այդ մասին արդեն առիթ եմ ունեցել խոսելու… Նորից չեմ խոսի քաղաքական համատեքստն ընկալելու կամ իմ հավակնությունների դե ֆակտո բացակայության մասին, բայց կավելացնեմ մի միտք, որը բխում է ելույթիս սկզբնամասի ասելիքից: Այսօր այս ամբիոնին կանգնած է ո՛չ թե անհատ քաղաքական-պետական գործիչ Ս. Սարգսյանը, ո՛չ Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահը: Նրանցից ոչ մեկն այստեղ գործ չունի անելու, և այսօրվա քվեարկությամբ դրված չէ մեկին կամ մյուսին հավանություն տալու կամ չտալու հարց: Այսօր այս ամբիոնից ելույթ է ունենում խորհրդարանի քաղաքական մեծամասնությունը կազմող Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահը: Ես այստեղ եմ նախ և առաջ որպես իշխող կուսակցության ղեկավար՝ հօգուտ իմ թեկնածության ասելու, որ ունեմ բավարար ազդեցություն և հնարավորություններ՝ ստանձնած քաղաքական պատասխանատվության շրջանակում ապահովելու խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքական ուժի ներդաշնակ աշխատանքը իշխանության օրենսդիր և գործադիր թևերում»:[14] Բավականին լավ կառուցված բառախաղը համակարգի վերարտադրության ու իշխանության պահպանման նպատակ ուներ ընդամենը: Սա, ըստ էության, քաղաքական իրավիճակի բացահայտ շահարկում էր, հայտ, որի նպատակը միայն ու միայն կառավարման երրորդ ժամկետ ապահովելն էր:

Սրան բացահայտ հակադրվում էր «փողոցի» հռետորաբանությունը, որի հիմքում քաղաքական տեքստի, դիսկուրսի ու նարրատիվի այլ տրամաբանություն էր: Ապրիլի երկրորդ տասնօրյակում արդեն ակնհայտ էր, որ քայլարշավը իր հիմնական խնդիրը՝ այն է քաղաքացիական մոբիլիզացիա ապահովելը, լուծում է: Ապրիլի 13-ից Երևանում ու այլ քաղաքներում քաղաքացիական անհազանդության շարժումը դառնում էր մասշտաբային, ամենօրյա ռեժիմով շարունակվում էին ցույցերը, երթերը: Ապրիլի 14-ին Ռադիոտան շենք մուտքը արձանագրեց հերթական կարևոր փոփոխությունը, իսկ հետագա զարգացումները արձանագրեցին գործընթացի անշրջելի լինելը: Ապրիլի 23-ին Ս. Սարգսյանի հրաժարականը արձանագրեց հեղափոխության հաղթանակը, իսկ մայիսի 8-

[14] Վարչապետի թեկնածու Ս. Սարգսյանի ելույթը Ազգային Ժողովի հատուկ նիստում: 17.04. 2018թ. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/04/17/parliament-speech/ (ստուգվել է 05.09.2020թ.):

ին Ն. Փաշինյանի ընտրվելը վարչապետի պաշտոնում հեղափոխության հաղթանակի դե-յուրե ամրագրումն էր։[15]

Սա շատ կարճ ու համառոտ նկարագրությունն է այն իրավիճակի, երբ Հայաստանում գոյություն ուներ երկու զուգահեռ իրականություն. *Ս. Սարգսյանի ու վերջինիս քաղաքական թիմի իրականությունը,* երբ նա հորդորում էր, որպեսզի գործընկերները Ն. Փաշինյանին վերադարձնեն խորհրդարանի դահլիճ և Ն. Փաշինյանի, փողոցի, *համաժողովրդական շարժման իրականությունը,* երբ Ն. Փաշինյանը հայտարարում էր, որ Ֆրանսիայի հրապարակից մինչև փակ շուկա մարդկանց հավաքվելու դեպքում հեղափոխությունը Հայաստանում կհաղթի։

Մարդաբանական հարթություն զարգացումները տեղափոխելիս կարող ենք արձանագրել, որ սա *երկու քաղաքական համակարգերի ու քաղաքական հռետորաբանությունների բախում էր,* որ ի վերջո ավարտվեց քաղաքացու ու քաղաքացիականի վրա խարսխված համակարգի հաղթանակով։

Հեղափոխության դե-յուրե հաղթանակի ամրագրումը, ավարտելով «փողոցի» փուլը, որակապես նոր խնդիրներ ձևակերպեց նույն հեղափոխության ու հեղափոխականների առաջ, որովհետև իշխանություն ունենալը ենթադրում է առարկայական պատասխանատվություն ու դրանից բխող գործողություններ։

Հետազոտական հիմնական հարցադրումը վերաբերում է կոնկրետ խնդրի. ուսումնասիրել ու վերլուծել, *թե արդյո՞ք քաղաքական գործիչների, տվյալ դեպքում՝ վարչապետ Ն. Փաշինյանի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ու «Իմ քայլը» դաշինքի ղեկավարների հանրային խոսքը՝ բովանդակային տեսանկյունից, շարունակում է հանրայնացնել այն թեզերը, որ կարևորվել են հեղափոխության ընթացքում ու հետհեղափոխական առաջին ամիսներին։*

Հետազոտական հարցադրումն այս ձևակերպմամբ, նորութային է։ Տեքստի ու խոսքի, լայն առումով՝ դիսկուրսի հետազոտությունը հաճախ դուրս է մնում քաղաքագիտական ուսումնասիրությունների շրջանակից, իսկ լեզվաբանները, մարդաբանները, ազգագրագետները, սոցիոլոգները, ում համար դիսկուրսի ուսումնասիրությունը հետաքրքիր ու կարևոր է, հակված չեն մտնել քաղաքագիտական հետազոտությունների դաշտ։ Մինչդեռ, Մ. Ֆուկոյի ձևակերպմամբ, ***«տիրապետել դիսկուրսին՝ նշանակում է ունենալ իշխանություն»։*** Հետևաբար, խոսքն ու տեքստը դիտարկելով ստանում ենք իշխանության՝ որպես ինստիտուտի, ներքին կապերի ու դրանց բնույթի դիտարկման լրացուցիչ հնարավորություն։ Սա, իր հերթին թույլ է տալիս առաջադրել կիրառական

[15]Թավշյա հեղափոխության խրոնիկան։ https://www.youtube.com/watch?v=fRUQK4fxH5Y (ստուգվել է 05.09.2020թ.)։

նշանակության խնդիրներ, քանի որ թույլ է տալիս «տեսնել» իշխանության բովանդակությունը, հանրայնացնել այն ու առաջարկել, թե ինչը և ինչպես պետք է փոխել տեքստի ու խոսքի բովանդակային լուրջ շեղումներից խուսափելու համար։

Վերլուծությունում, օրինակ, ցույց կտրվի, որ որոշ դեպքերում նշված շեղումն առկա է. քաղաքական հռետորաբանությունում շարունակում է չկարևորվել *հասկացությունների բովանդակությունը, միասին են գործածվում հասկացություններ, որ նույնական կամ համադրելի չեն։* Հետևաբար, կարևոր է «խոսք տարածողների» (վարչապետ, վարչապետի աշխատակազմ, հանրային կապերի պատասխանատուներ, խորհրդատուներ, պետական կառույցներ) վերաբերմունքը տեքստի, բովանդակության ու դրա հանրանացման մեխանիզմների նկատմամբ։ *Հետևողականությունը, բովանդակային հստակությունը, հասկացությունների տեղին գործածումը կարևոր են և քաղաքական հռետորաբանության ու դիսկուրսի և հանրային ընկալումների հստակեցման ու ավելի արդյունավետ դարձնելու տեսանկյունից։*

Նշված խնդիրներով պայմանավորված, հետազոտությունն ունի ավելի լայն, ընդգրկուն և նեղ, փոքր թիրախային լսարաններ։ Փոքր լսարանը քաղաքական տեքստն ու խոսքը, ինչպես նաև վերջինիս հանրայնացման մեխանիզմները ապահովող ինստիտուտներն ու թիմերն են. վարչապետի աշխատակազմ ու տեղեկատվություն ապահովող կառույցներ, «Իմ քայլ»-ը դաշինքի ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հանրային կապերի պատասխանատուներ ու ծառայություններ։

Մեծ լսարանը քաղաքական գործընթացների ուսումնասիրությամբ զբաղվողներն են, ինչպես նաև քաղաքական տեքստ «առաջարկող» այլ կառույցներն ու անհատները։

Ասվածից չի բխում, որ հետազոտության խնդիրն իշխանության ուսումնասիրությունն է ընդհանրապես։ Հարցադրումներն ավելի կոնկրետ են, առարկայական, վերաբերում են հեղափոխության ու ետհեղափոխական շրջանի սուբյեկտի՝ քաղաքացու վերաբերյալ տեքստի ու խոսքի, *լայն առումով՝* քաղաքական հռետորաբանության ու դիսկուրսի ուսումնասիրությանը։

Ինչու՞ է խնդիրը հրատապ ու արդիական։

Հետազոտությունը հնարավորություն տվեց առանձնացնել երկու առում.

Ա. հեղափոխությանը հաջորդած ժամանակում, հատկապես արտախորհրդարական ընդդիմությունը փորձում է ձևավորել նոր դիսկուրս, ըստ որի քաղաքացին անտեսված է, իսկ հեղափոխության ընթացքում «օգտագործվել» է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և անձամբ Ն. Փաշինյանի իշխանությունն ապահովելու նպատակով։ Այս պայմաններում, բնականաբար, աճում են տարբեր հասկացությունների շուրջ շահարկումները։

Բ. Հասկացությունների հստակեցումը, քաղաքական հռետորաբանության ու դիսկուրսի բյուրեղացումը կարևոր են պետական քաղաքականության պլանավորման, փաստաթղթերի մշակման գործընթացում: Հասկացություններն ու դրանց հանդեպ վերաբերմունքն այս փուլում դառնում են ցուցիչ այն բանի, թե որքանով է իշխանությունը հետևողական քաղաքացու ու քաղաքացիության ինստիտուտները կայացնելու, զարգացնելու, գործընթացների հիմքում քաղաքացուն տեսնելու իր հանձնառություններում:

3. Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը

3.1 *Նպատակ և խնդիրներ*

Նկարագրված իրավիճակը այն մեկնակետն է, որից բխել են հետազոտական գործողությունները:

«Քաղաքական հռետորաբանությունը և դրա փոփոխությունները ետհեղափոխական Հայաստանում. կիրառական դիտանկյուն» վերնագրով հետազոտության նպատակն է ուսումնասիրել, վերլուծել ու հանրայնացնել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Իմ քայլը» դաշինքի ***տեքստում*** (ծրագրային և այլ փաստաթղթեր) և ***խոսքում*** (հանրային ելույթներ, ուղերձներ, հարցազրույցներ) ներկայացված ***քաղաքացիության ինստիտուտին վերաբերող նարրատիվն ու քաղաքական հռետորաբանությունը 2018-2020թթ.,*** բացահայտելու համար,

- թե որքանով է իշխող քաղաքական ուժը մի կողմից «կայուն»՝ բազային, համակարգային կարևորության ձևակերպումների բովանդակությանը հավատարիմ մնալու առումով
- և հետևողական, դրանք հանրային կյանքի կարևոր բաղադրիչ դարձնելու հարթությունում:

Սրանից բխել են հետազոտական հիմնական խնդիրները, որոնք վերաբերում են տեքստի, խոսքի ուսումնասիրությանը.

1. «քաղաքացի», «ՀՀ քաղաքացի», «քաղաքացիություն» հասկացությունները՝ փաստաթղթերում, (2018-2020թթ. ընդունված *ՀՀ կառավարության ծրագրեր, ռազմավարական ծրագրեր, հայեցակարգեր, պետական քաղաքականության այլ փաստաթղթեր*), կուսակցությունների, հիմնականում «Քաղաքացիական պայմանագրի»

փաստաթղթերում *(կանոնադրություն, այլ կուսակցական փաստաթղթեր, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրեր, այլ փաստաթղթեր)։*

2. Քաղաքական գործիչների հանրային խոսքում «քաղաքացու» ներկայացվածությունը. խոսքի հետևողականությունը, շահարկումները, եթե այդպիսիք կան։

- *Հանրային խոսքում ինչպես է ներկայացվում քաղաքացին,*
- *իրավունքների ու պարտականությունների ինչպիսի շրջանակ է նրան վերագրվում,*
- *որքանով են ձևակերպումներն իրավիճակային և որքանով՝ համակարգային։*

3. Արդյոք հանրային խոսքը տարբեր է ըստ լսարանների՝ ներքին լսարան, հասարակություն, արտաքին լսարան՝ միջազգային կազմակերպություններ, կառույցներ։ Եթե այո, ապա ինչով է պայմանավորված կամ ինչպես կարելի է բացատրել տարբերությունները։

3.2 *Ժամանակացույցը, մեթոդաբանությունը*

Հետազոտությունն իրականացվել է 2020թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին, 5 ամսում, երեք փուլով։

Առաջին փուլը տևել է մեկ ամիս։ Այս ժամանակահատվածում վերջնական տեսքի են բերվել հիմնական հարցադրումները, դիտարկվող հասկացությունների ցանկը՝ *քաղաքացի, քաղաքացիություն, Հայաստանի քաղաքացի, հպարտ քաղաքացի, Հայաստանի ժողովուրդ*։

Սրան զուգահեռ, հստակեցվել են դիտարկվող միավորները՝

Ա. պետական քաղաքականության փաստաթղթեր, կուսակցական փաստաթղթեր, այլ փաստաթղթեր։

Բ.Վերջնականացվել է քաղաքական գործիչների ցանկը, որոնց խոսքը դիտարկվել է հետազոտության ընթացքում։ Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքում կատարվել են որոշ ճշգրտումներ։ Քաղաքական գործիչների հանրային խոսքի դիտարկումը ցույց տվեց, որ դոմինանտը, ուղղորդողն ու դիսկուրս որոշողը Ն. Փաշինյանի խոսքն է, իսկ «Իմ քայլը» խորհրդարանական խմբակցության ղեկավար Լ. Մակունցի խոսքը փոխլրացնում կամ բխում է Ն. Փաշինյանի խոսքից և ըստ այդմ, քաղաքական դիսկուրսի վրա նվազագույն ազդեցություն ունի։ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահ Ս. Պապիկյանն այս առումով կրավորական է։ Նա ավելի ակտիվ է որպես նախարար և նրա հանրային խոսքը քաղաքական դիսկուրսի վրա էական ազդեցություն չունի։

Ըստ այդմ, վերլուծության տարբեր հատվածներում այլ քաղաքական գործիչների խոսքը վերլուծվում է, եթե կան տարբերություններ կամ որոշակի ազդեցություն քաղաքական դիսկուրսի վրա։

Առաջին փուլում հստակեցվել է նաև դիտարկվող օբյեկտների ցանկը՝ ուղերձներ, մամլո ասուլիսներ, պաշտոնական հանդիպումների ընթացքում արտահայտված մոտեցումներ, այլ տեսակետներ։ Դիտարկվել են պետական ու այլ տոների, համապետական միջոցառումների ընթացքում հնչած խոսքը, ուղերձները, շնորհավորանքները, ելույթները միջազգային ու հանրապետական միջոցառումներում։ Դիտարկվել են տեքստեր[16], որոնցից ոչ բոլորն են սակայն հղված հետազոտությունում։ «Կրկնությունների» առկայության դեպքում վերլուծվել է այն փաստաթուղթը, որի ձևակերպումները առավելագույնս են համապատասխանում հետազոտական հարցադրումներին։

Երկրորդ փուլը տևել է երկուսուկես ամիս։ Այն վերջնական տեսքի բերված ցուցակների հիմամբ առանձնացված միավորների դիտարկման ու վերլուծության փուլն էր։

Երրորդ փուլում շարադրվել, խմբագրվել ու սրբագրվել է վերլուծությունը, զուգահեռ՝ կազմվել են հետազոտական պարտավորություններից բխող այլ փաստաթղթեր։

Հետազոտությունում կիրառվել է երկու մեթոդ.

1. Փաստաթղթերի, այդ թվում ուղերձների, ելույթների, շնորհավորանքների, այլ նյութերի ուսումնասիրության ընթացքում նախապատվությունը տրվել է փաստաթղթերի վերլուծության մեթոդին։

Հստակեցվել են դիտարկման հիմնական հասկացությունները և միավորները՝ *քաղաքացի, քաղաքացիություն։* Դիտարկվել է հասկացությունների գործածության բովանդակային համատեքստը, եթե տեքստը հնարավորություն ընձեռել է՝ նաև հասկացությունների գործածման բովանդակային համատեքստի փոփոխության դինամիկան։

2. Հանրային քաղաքական խոսքի վերլուծության ընթացքում կիրառվել են դիսկուրս[17] վերլուծության, ի մասնավորի Թ. Վան Դիյկի հայտնի «What is Political Discourse Analysis» հոդվածում ու այլ ուսումնասիրություններում ներկայացված մոտեցումները։

[16] Տես Հավելվածը։

[17] Դիսկուրսը հայերեն թարգմանվում է որպես խոսույթ, տրամախոսություն։ Բազմաթիվ հետազոտություններում, սակայն, այն գործածվում է առանց թարգմանության։

Հաշվի առնելով մոդելի բազմամակարդակությունը, տարբեր տեսական մոտեցումների առկայությունը, հստակեցվել են հիմնական ելակետային մոտեցումները։

Քաղաքական դիսկուրսը, սույն ուսումնասիրության շրջանակում դիտարկվել է որպես համալիր կոմունիկատիվ գործողություն, այնպիսի իրավիճակ կամ իրադարձություն, որ տեղի է ունենում խոսողի (մեր դեպքում՝ քաղաքական գործչի) և լսողի (հանդիսատեսի, մեր դեպքում՝ *քաղաքացի, ՀՀ քաղաքացի*) միջև՝ որոշակի տարածաժամանակային կամ այլ համատեքստում։ Այս մոտեցմամբ քաղաքական դիսկուրսը դառնում է ոչ միայն սոսկ լեզվաբանական ակտ, այլ ավելի լայն՝ ***սոցիալական ու մարդաբանական համատեքստ ունեցող իրողություն,*** որի դիսկուրսիվ պարադիգման, ի թիվս այլոց, արտացոլում է նաև մարդու ֆիզիկական տարածությունը։ Այդ պատճառով կարևորվում է անհատի լեզվամտածողությունը, իսկ դիսկուրսը դառնում է մարդակենտրոն։

Վերլուծությունում սրան հավելվել է վան Դիյկի մեկ այլ մոտեցում, ըստ որի, դիսկուրսը ոչ միայն քաղաքական գործիչների, ակտորների գործողությունն է ներառում, այլ նաև *տարբեր ռեցիպիենտների՝ քաղաքական կոմունիկացիոն գործողությունները, ինչպիսիք են օրինակ՝ հանրությունը, մարդիկ, քաղաքացիները, զանգվածները, մասսաները։* Այս մոտեցումը, քաղաքական դիսկուրսը դիտարկելով որպես կոմունիկացիոն ակտ, միաժամանակ այն տեղափոխում է հանրային հարթություն, տարածություն, բնականաբար, ավելացնելով նաև մասնակիցների թիվը։

Նշված երկու մոտեցման օգտագործումը հետազոտության ընթացքում հնարավորություն է տվել լուծել ձևակերպված խնդիրներն ու նաև կիրառական տեսանկյունից դիտարկել ետհեղափոխական Հայաստանի քաղաքական հռետորաբանության (լայն առումով՝ քաղաքական դիսկուրսի) զարգացումը և փոփոխությունները։ Կոմունիկացիան, ինչպես նաև ռեցիպիենտների արձագանքը, հետազոտության սահմանափակ ռեսուրսներով ու կոնկրետ խնդիրներով պայմանավորված, մանրամասն չեն վերլուծվել, սակայն խմբային մակարդակում արձագանքներին անդրադարձ եղել է։ Օրինակ, Ազգային ժողովի շրջափակում Ն. Փաշինյանի կոչով կամ ամենակարևոր արձագանքը՝ խորհրդարական ընտրությունների արդյունքները, որ ցույց տվեցին, որ տվյալ փուլում հասարակության մեծամասնության համար առաջարկվող դեիսկուրսը միանշանակ ընդունելի է։

4. Արդյունքների վերլուծություն

Քաղաքական գործունեության, գործընթացների ուսումնասիրությանը մոտեցումները տարբեր են։ Մի դեպքում կարևորվում է բուն քաղաքականությունը՝

կուսակցությունների, քաղաքական գործիչների, գաղափարախոսությունների դիտարկման տեսանկյունից, մեկ այլ դեպքում՝ գործընթացներին հասարակության / առանձին հատվածների ու անհատների մասնակցության առանձնահատկությունները:

Վերջին մի քանի տասնամյակում աճում է նշված երևույթների ազգաբանական/մարդաբանական ուսումնասիրությունների թիվը: Քաղաքական մարդաբանությունն այսօր արագ և դինամիկ զարգացող գիտակարգ է ոչ միայն արևմտյան գիտական կենտրոններում, այլ ետխորհրդային տարածքում: Սա բնական է: Քաղաքական գործընթացները, գործողությունները ունեն սոցիալական և մշակութային հենք, հաջողում կամ տապալվում են ոչ միայն ակտորների փորձառության կամ այլ պատճառներով: Կարևոր է նաև ռեցիպիենտի, տվյալ դեպքում՝ հասարակության, անհատի, ընտանիքի, գյուղաբնակի ու քաղաքաբնակի մոտեցումը, վերաբերմունքը, գործողությունն ու քաղաքական/քաղաքացիական վարքագիծը:

Մարդաբանական, մշակութաբանական մոտեցումները քաղաքականությանն ու քաղաքական գործընթացներին կարևորում են հենց այս դիտանկյունը.

անհատի, խմբի, ընտրողի, քաղաքական գործչի, հասարակության **գործողություններն ընկալվում ու դիտարկվում են որպես մշակութային ու մշակույթով պայմանավորված:**

Անհատի մակարդակում նրա մշակութային նկարագիրը, ինկուլտուրացիայի ու սոցիալականացման մեխանիզմները կարող են ազդել/ազդում են վերջինիս քաղաքական նախընտրությունների ու վարքագծի վրա և դրսևորվում կոնկրետ քաղաքական գործողություններին մասնակցության ձևով. *քաղաքացիական ակտիվություն, ընտրակաշառք, ծանոթի, բարեկամի կամ հարազատի խնդրանք-հորդորով քվեարկություն և այլն:*

Քաղաքական գործիչների, կուսակցությունների դեպքում ևս մշակույթը «ներկա» է: Գաղափարախոսությունները, որ կրում են կուսակցությունները, պետության զարգացման, իշխանության բնույթի, իշխանություն-հասարակություն հարաբերությունների մասին նրանց պատկերացումները լայն առումով մշակութային են ու մշակույթ առաջարկող: Հայաստանում «մարդ-կուսակցությունների» գոյությունը նույնպես այս համատեքստում է, սոցիալ-մշակութային իրողություններով պայմանավորված: Ֆինանսական ու ազդեցությունների այլ լծակներ ունեցող անհատները, դրանք օգտագործելով, ձևավորել և ձևավորում են կուսակցություններ ոչ թե գաղափարների, մոտեցումների ու սկզբունքների, այլ սեփական քաղաքական նպատակների ու ցանկությունների շուրջ: Այս կուսակցությունները, որպես կանոն, միշտ ունենում են նույն լիդերը, ընտրություններին մասնակցում են կայուն ցուցակով, փոփոխությունները հիմնականում առաջնորդի տրամադրության արդյունք են և

փաստացի դադարեցնում են իրենց գոյությունը, երբ լիդերը հեռանում է քաղաքականությունից (ինչպես եղավ Ա. Բաղդասարյանի կամ Ա. Գեղամյանի դեպքում)։[18]

Մշակույթն այս իրողություններում «ներկայացված» է տարբեր պատճառներով։

Այն կյանքի որոշակի փուլերից տրվում է կրթության միջոցով, հետագայում զարգանում է որպես արդյունք նախընտրությունների, սոցիալական կապերի ու դրանցով պայմանավորված սոցիալական վարքի ու գործողությունների։

Քաղաքական ու քաղաքացիական ակտիվությունը նույնպես ձևավորվում են մշակույթի ազդեցությամբ։ Գաղափարախոսությունները, համակարգերը, տնտեսության զարգացման՝ ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող մոդելները մշակութային մոդելներ են, որ անհատին առաջարկում են «լավ ապրելու բանաձևեր»՝

- ավտորիտար համակարգում՝ ենթարկվել,
- ժողովրդավարական միջավայրում՝ ունենալ քաղաքացիական ակտիվություն, մասնակցություն տարբեր գործընթացների։

Համակարգերն ու գաղափարախոսությունները, սակայն, սոսկ ինքնին գոյություններ չեն։ Դրանք գոյություն ունեն որպես տեքստ, որպես հանրային խոսք, լայն առումով՝ որպես դիսկուրս, խոսույթ կամ տրամախոսություն։ Դիսկուրսի տեսության հայտնի տեսաբաններից Մ. Ֆուկոն ասում էր. *«տիրապետել դիսկուրսին՝ նշանակում է ունենալ իշխանություն»։ Վերջին մի քանի տասնամյակում այս ընկալումն առավել քան արդիական է դարձել՝ պայմանավորված տեխնոլոգիաների աննախընթաց զարգացմամբ ու հանրային մոբիլիզացիայի այլընտրանքային մեխանիզմների կատարելագործմամբ։* Եթե սրան հավելում ենք վան Դիյկի այն մոտեցումը, որ դիսկուրսն ունի «տարածաժամանակային համատեքստ», պարզ է դառնում է, որ ի սկզբանե հեղափոխական շարժումն առաջարկում էր այլ, գոյություն ունեցողից տարբեր դիսկուրս։

Հայաստանում գոյություն ունեցող քաղաքական համակարգը «մենախոսության» համակարգ էր, նվազագույնի հասցված մասնակցայնությամբ։ Բոլոր խնդիրները, որ առաջանում էին, լուծվում էին կամ ընտրակաշառքի, կամ ոչ ֆորմալ ազդեցության այլ եղանակներով։ «Ռեյտինգային» պատգամավորները, մարզպետները, յուրաքանչյուրն իր լիազորությունների շրջանակում, ապահովում էր մենախոսության կենսունակությունը։

Հեղափոխական շարժումը, երաժշտական տերմինաբանությամբ, առաջարկեց «պոլիֆոնիայի, բազմաձայնության» դիսկուրսը, որի դեմ պայքարելու փորձառություն

[18] Սրա ամենահետաքրքիր օրինակներից մեկը 2017թ. Խորհրդարանական ընտրությունների ՀՀԿ ցուցակն էր, երբ մինչև վերջին պահը քննարկվում էր, թե այս անգամ շախմատային խաղատախտակի ինչպիսի դասավորություն է նախատեսում Ս. Սարգսյանը։ Նույնքան ակտիվ էին քննարկումները ԱԺ նախագահի թեկնածուի անվան հետ կապված, սակայն գրեթե ոչ ոք չէր ենթադրում, որ առաջադրվելու է Ա. Բաբլոյանի թեկնածությունը։

պահպանողական քաղաքական համակարգը չուներ։ Ի սկզբանե Ն. Փաշինյանը հայտարարեց, որ շարժումն ապակենտրոն է, իրականում՝ բազմակենտրոն։

Ավտորիտար, դասական քաղաքականության կանոններով ապրող համակարգը, որ սովոր էր ցույցերը, քաղաքացիական անհնազանդության գործողությունները «ճնշել» մեկ կետում՝ Ազատության հրապարակում, Բաղրամյան պողոտայում, Մաշտոցի պուրակում, պատրաստ չէր միանգամից մի քանի տասնյակ «Ազատության հրապարակների» դեմ պայքարին։

Իշխանությունը, պետությունը որպես ինստիտուտներ, հազարամյակներ շարունակ մտածողների, փիլիսոփաների, ավելի ուշ՝ քաղաքագետների, պատմաբանների ու այլ մասնագետների ուշադրության կենտրոնում են։ Բազմաթիվ տեսություններ ու մեթոդներ են մշակվել, տարածվել ու մերժվել իշխանության ու պետության ուսումնասիրության տարբեր փուլերում։

Այդպիսի տեսություններից է նաև *դիսկուրս վերլուծության մեթոդը,* որ հետո զբաղվեց նաև քաղաքական գործընթացների ուսումնասիրությամբ, դառնալով քաղաքական դիսկուրս վերլուծություն։ Ավելի ուշ մեթոդի հայտնի հեղինակներից և կիրառողներից Թ. Վան Դիյկն առաջարկեց այն փոխարինել «քաղաքական դիսկուրս հետազոտություններ» եզրույթով։

Դիսկուրս վերլուծության և քաղաքական դիսկուրս վերլուծության մեթոդները վերջին մի քանի տասնամյակում հասարակական և հումանիտար գիտությունների հետազոտական գործիքակազմում կարևոր տեղ ունեն։[19] Բուն մեթոդի ձևակերպումները բավականին շատ են, սակայն լավագույն ձևակերպումներից մեկը, հետազոտողների կարծիքով, տվել է Թ. վան Դիյկը, առանձնացնելով դիսկուրսի չորս մակարդակ։ Մինչ այդ հեղափոխական էին Մ. Ֆուկոյի մոտեցումները՝ «Գիտելիքի/իմացության հնագիտություն»[20] աշխատությունում ձևակերպված։

Քաղաքական դիսկուրս վերլուծության մեթոդը, ի թիվս այլ խնդիրների, ուսումնասիրում է նաև իշխանության և տիրապետության հարաբերությունները, իսկ դրանք, ինչպես ցույց է տրվել դեռևս 1970-ական թթ., արտահայտվում են «վերահսկողություն» տերմինով, որ կարելի է ասել հիմնական տեսական հասկացությունն է։ Դիկուրսի հանդեպ այս տերմինը կիրառելու դեպքում, և հետազոտական կանխավարկածի և գործողությունների մակարդակում պետք է ձևակերպվի հետևյալ հարցերը.

- ✓ ո՞վ ունի բազային իշխանական այնպիսի ռեսուրսի մատչելիություն, ինչպիսին հանրային դիսկուրսն է,

[19] Ս. Հակոբյան, Դիսկուրս անալիզի տեսություն. http://boon.am/diskursanalyse/ (ստուգվել է 06.09.2020թ.)
[20] Մանրամասն տես՝ Մ. Фуко, Археология знания, Санкт-Петербург, М., 2004.

- ✓ ո՞վ ունի հասանելիություն մեդիա-դիսկուրսին, քաղաքական, կրթական և ակադեմիական դիսկուրսներին։
- ✓ Ո՞վ կարող է վերահսկել այդպիսի դիսկուրսի «արտադրությունը», ինչպես նաև լրագրողների և մեդիայի վրա ընդհանրապես ազդեցություն ունեցող մամլո ասուլիսները, պրեսս-ռելիզները, այլ գործիքները։[21]

Այս ձևակերպումները, որպես տրամաբանական հետևանք, ցույց են տալիս, որ իշխանությունը կապված է վերահսկողության հետ, իսկ դիսկուրսի վերահսկողությունը նշանակում է առաջին հերթին վերջինիս արտադրության մատչելիություն, հետևաբար՝ ազդեցություն բովանդակության, ոճի, վերջին հաշվով՝ հանրային գիտակցության վրա։[22])։

Վերլուծությունում որպես հիմք ենք ընդունել նաև Թ. վան Դիյկի և այլ հետազոտողների այն մոտեցումը, ըստ որի, դիսկուրսը վերլուծության է ենթարկվում ոչ միայն որպես ինքնուրույն «վերբալ» օբյեկտ, այլ նաև որպես կոնետքստուալ համագործակցություն, սոցիալական պրակտիկա կամ սոցիալական հաղորդակցության տիպ սոցիալական, պատմական և քաղաքական համատեքստում։[23]

Շատ համառոտ ու նախնական այս տեսական հարցադրումները ուրվագծում են նաև վերլուծության կառուցվածքն ու տրամաբանությունը։

4.1 «Ժողովուրդ» և «քաղաքացի» հասկացությունները քաղաքական դիսկուրսում ու հռետորաբանությունում. փոփոխությունները, պատճառներն ու դրսևորումները մինչև հեղափոխությունը և հետագայում

2018թ. հեղափոխության հիմնական/կարևորագույն հասկացությունները երկուսն էին. քաղաքացի և ժողովուրդ։ Շարժումը կառուցված էր հանուն ժողովրդի և քաղաքացու, սակայն, ի տարբերություն նախորդ տարիների այլ շարժումների, այն մասնակցային էր, հաջողության կարևորագույն նախապայման համարում էր յուրաքանչյուր քաղաքացու մասնակցությունը։ Հեղափոխության հաղթանակից հետո ևս քաղաքացին ու ժողովուրդը շարունակեցին կարևոր մնալ քաղաքական հռետորաբանությունում ու տեքստում, չնայած, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, հասկացությունների բովանդակությունը, իրավիճակով, թիրախային լսարանով, այլ գործոններով պայմանավորված, կարող է նաև տարբեր լինել։

2018թ. թավշյա հեղափոխությունը, ինչպես նաև նախորդող ժամանակահատվածը, դիսկուրսի և վերջինիս մշակութային-մարդաբանական բովանդակության տեսանկյունից կարևոր նրբերանգներ ունեն, ինչը ցույց տվեց նաև նյութերի ուսումնասիրությունը։

[21] Т. Ван Дейк, Дискурс и власть. Репрезентация доминирования в языке и коммуникации, М., 2013, էջ 14-15
[22] Т. Ван Дейк, Дискурс и власть, էջ 15։
[23] Նույն տեղում։

Գյումրիից իր միայնակ քայլերթը սկսելով, Ն. Փաշինյանը մշակութաբանական տեսանկյունից գուցե պարզունակ, իսկ քաղաքագիտական ու քարոզչական տեսանկյուններից՝ խիտ, բարդ ու բազմաշերտ գործողության սկիզբ դրեց. *«Սա քայլ է ընդդեմ Սերժ Սարգսյանի և ՀՀԿ-ի: Դեպի ազատ և երջանիկ Հայաստան: Եվ ուրեմն գնացինք»:*[24]

Սա, ըստ էության, Հայաստանյան քաղաքական դաշտի նախընթաց զարգացումների հանրագումարային բանաձևն էր:

Ընդդիմադիր քաղաքական դաշտը տարիներ շարունակ արձանագրում էր ՀՀԿ և անձամբ Ս. Սարգսյանի իշխանության ավտորիտար, հակաժողովրդավարական բնույթը, որի խնդիրը պետական սեփականության յուրացումն էր, արտոնությունների, մենաշնորհների պահպանումը, իսկ իշխանությունը «ապահովագրական պոլիս», «փրկօղակ» էր այս ամենն ունենալու ճանապարհին:

Քաղաքացին մենակ էր այս ամենի առաջ այնպես, ինչպես մենակ էր քայլարշավը Գյումրիից սկսող ընդդիմադիր պատգամավոր Ն. Փաշինյանը:

Գոյություն ունեցող համակարգում քաղաքացին չուներ ազատության և երջանկության հնարավորություն:

Ընդդիմության դիսկուրսը, սակայն, ուներ առաջարկ և «դեղատոմս».

- քաղաքացիական պայմանագիր՝ որպես քաղաքացիական հարաբերությունների յուրօրինակ մոդել,
- «1+1+…» բանաձևը, որ ընդդիմությունը և Ն. Փաշինյանը արդեն փորձարկել էին համապետական ընտրություններում,
- «Եվ այդ մեկը դու ես» բանաձևը, որ հակադրում էր մի կողմից ավտորիտար համակարգում գոյատևող և մյուս կողմից՝ ընտրության հնարավորություն ունեցող անհատին:

Այս երեք՝ քաղաքական հռետորաբանության և դիսկուրսի տեսանկյունից կարևոր բանաձևերը՝ ***քաղաքացիություն և քաղաքացիների միջև պայմանագիր, անհատ և վերջինիս կարևորում,*** ընդդիմության ընկալմամբ և առաջարկով պետք է ապահովեին ճանապարհը «ազատ ու երջանիկ» Հայաստան, որն այլևս մասնակցային էր:

Ազատությունն իր հերթին, դառնում էր և անհատի և պետության երջանկության նախապայման:

Պատահական չէ, որ հենց այս ձևակերպումն է որպես կարգախոս դրված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության էջում. *«Երջանիկ անհատ, հոգատար հանրություն, հզոր պետություն»:* Սրանք կուսակցության ծրագրային ուղենիշներն են, որ

[24] Թավշյա օրագիր. հեղափոխության 1-ին շաբաթը. https://www.youtube.com/watch?v=BZwcuii8a-A:

ուրվագծում են նաև գործընթացների և զարգացումների շղթան. *անհատից դեպի հանրություն և պետություն*:

Սա նաև այն հիմնական գիծն է, որին Ն. Փաշինյանը, որպես քաղաքական գործիչ, հետևում էր մինչև հեղափոխությունը. բերված բանաձևերն արդեն ծանոթ էին հասարակությանը նախորդ շրջաններից և միաժամանակ, քաղաքական հռետորաբանության ու դիսկուրսի տեսանկյունից, տեղավորվում էին հիմնական գծի մեջ:

Մինչև Ս. Սարգսյանի հրաժարականը ապրիլի 23-ին, հեղափոխական շարժումն այս հիմնական տրամաբանության շրջանակում էր:

Ս. Սարգսյանի հրաժարականն ու Ն. Փաշինյանի վարչապետ ընտրվելը մայիսի 8-ին արդեն նոր իրավիճակ էին առաջին հերթին քաղաքական դիսկուրսի տեսանկյունից:

Վարչապետ ընտրվելով Ն. Փաշինյանն այլևս դե-յուրե իշխանության կրող էր, ինչը նշանակում էր, որ ընդդիմադիր դիսկուրսը դառնում/դարձվում է պաշտոնական կամ իշխանությունը ձեռնամուխ է լինում նոր դիսկուրսի մշակմանն ու հանրայնացմանը:

2018թ. մայիսի առաջին տասնօրյակի զարգացումները ցույց տվեցին, որ Ն. Փաշինյանն ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը պահպանում են այն դիսկուրսն ու քաղաքական հռետորաբանությունը, որ ապահովել էին հեղափոխական շարժման հաջողությունը: Դրան նախորդել էին բավականին բարդ ու հակասական զարգացումներ: Ն. Փաշինյանը առաջին քվեարկությամբ վարչապետ չընտրվեց ու մինչև մայիսի 8-ի քվեարկությունը, հաղթանակած հեղափոխությունը դեռևս փողոցում էր, ուժեղացնելով ճնշումը համակարգի նկատմամբ:

Մայիս 8-ի երկրորդ քվեարկության ընթացքում Ն. Փաշինյանի ելույթը, ըստ էության ծրագրային էր. վերլուծում էր հեղափոխությունը, գնահատում իրավիճակն ու միաժամանակ նախանշում ապագայի գործողությունների ընթացքը:

Այս ելույթում լավագույնս ներկայացված են նաև տարբեր հնարքներ՝ քաղաքական հռետորաբանության, ամբոխահաճո արտահայտությունների, երբեմն նաև՝ պարզունակ շահարկումների զինանոցից:

Ելույթը ընդարձակ է, բազմաշերտ, ընդ որում, գաղափարական, արժեքային, համակարգային շեշտադրումները, ազգայինի ու քաղաքացիականի հետաքրքիր զուգակցումը հետագայում ևս հանդիպում են Ն. Փաշինյանի հանրային խոսքում և շարունակում մնալ դիսկուրս ձևավորող կամ դիսկուրսի վրա ազդող: Դրանք նաև ակտիվ տիրաժավորվում են կուսակցության ու խմբակցության տարբեր ներկայացուցիչների կողմից:

«…Այսօր ***հայոց արժանապատվության*** *միջնաբերդի՝ Շուշիի ազատագրման 16-րդ տարեդարձն է, եւ ես նախ եւ առաջ ուզում եմ բոլորիս շնորհավորել այդ դարակազմիկ եւ*

շրջադարձային հաղթանակի առիթով. ***մեծ խորհրդանիշ կա նրանում, որ Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության դե յուրե հաղթանակը պետք է արձանագրվի հենց այսօր՝ Շուշիի ազատագրման տարեդարձի օրը:***

Հայաստանի քաղաքացին եւ հայ ժողովուրդն այսօր ոգեւորված են նույնքան, որքան Շուշիի ազատագրման օրերին, Հայաստանի քաղաքացին եւ հայ ժողովուրդն այսօր հաղթանակած է նույնքան, որքան Շուշիի ազատագրման օրերին…

Սա համազգային եւ համաժողովրդական զարթոնքի բացառիկ ժամ է, եւ ինչպես 1988 թվականի համազգային շարժումը հանգեցրեց Արցախի դե ֆակտո ինքնորոշմանը, հայկական հեղափոխության արդյունքն ի վերջո լինելու է Արցախի ինքնորոշման իրավունքի դե յուրե միջազգային ճանաչումը:

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ, Հայաստանում արտոնյալներ չեն լինելու եւ վերջ: Ընտրությունների արդյունքներն այլեւս չեն կեղծվելու, ընտրակաշառք չի բաժանվելու եւ վերջ: Արհեստական տնտեսական մենաշնորհներ չեն լինելու, յուրաքանչյուր ոք կարողանալու է զբաղվել իր նախընտրած բիզնեսով եւ վերջ: Մարդու իրավունքները պաշտպանված են լինելու եւ վերջ: Իշխանությունը փող աշխատելու միջոց չի լինելու, երկրից արմատախիլ է արվելու կոռուպցիան եւ վերջ: Հաստատվելու է օրենքի, իրավունքի գերակայություն եւ վերջ:

Եւ ուրեմն, սիրելի՛ հայրենակիցներ, ձեր վերադարձի ժամը եկել է: Իմ վարչապետ ընտրվելն ինքնաբերաբար կնշանակի ձեզ հայտնի բոլոր տեսակի խոչընդոտների ու ապօրինությունների վերացում».[25]

Բավականին ընդարձակ այս հատվածը, կտրուկ անցումներով ու թեմատիկ բազմազանությամբ, դատելով շեշտադրումներից, ***ուղղված է ավելի շատ արտաքին աշխարհին, Սփյուռքին ու հասարակությանն ընդհանրապես:***

Այն, արդյունքի տեսանկյունից հեղափոխության բանաձևում է.

«հեղափոխությունը ազգային է *(սա պատասխանն է հատկապես ՀՀԿ ու այլ ազգային կամ ազգայնական ուժերի), որովհետև Շուշին ու արցախյան հաղթանակը համարում է ազգային արժանապատվության խնդիր,*

հեղափոխությունը համաժողովրդական է *և հանգեցնելու արցախյան խնդրի դե-յուրե լուծմանը (քաղաքական դիսկուրսի ու հռետորաբանության տեսակետից շատ հետաքրքիր մոտեցում է, որովհետև բանաձևում է վերադարձը մաքուր, զուլալ ակունքներին՝ Արցախյան շարժմանը),*

հեղափոխությունը լեգիտիմ է, *որովհետև այն անարյուն է, թավշյա,*

հեղափոխությունը սոցիալական է, *որովհետև լուծում է արդարության, օրենքի առաջ հավասարության խնդիրը:*

[25]Ն. Փաշինյանի ելույթը Ազգային Ժողովում 2018թ. մայիսի 8-ին: https://www.aniarc.am/2018/05/08/nikol-pashinyan-8-may-2018/:

Հեղափոխությունն իրավական է, *որովհետև բոլոր լուծումները տրվելու են միայն օրենքի շրջանակներում:*

Հեղափոխությունը քաղաքացունն է, *ով վերադարձնում է իրենից խլված իրավունքներն ու հնարավորությունները»:*

Քաղաքական դիսկուրսի վրա ազդեցության առումով կարևոր է հասարակության՝ Շուշիի ազատագրման և հեղափոխության հաղթանակի ոգևորությունները նույն մակարդակի վրա դնելու հնարքը *(հետագայում այս միտքը կրկնեց Ս. Միքայելյանը)*:

Սա կարող է դիտվել նաև որպես շահարկում՝ քաղաքական հռետորաբանության, տեքստի ու խոսքի միջոցով ցանկալին կամ չստուգվածը որպես իրականություն ներկայացնելու փորձ:

Քաղաքական գործընթացներում նմանատիպ հայտարարությունները ընդունելի են, եթե ունեն գիտական հենք՝ հետազոտություններ, հարցումներ, հանրային կարծիքի ուսումնասիրության տվյալներ և եթե իրադարձությունից անցել է որոշ ժամանակ ու մարդիկ կարող են սթափ գնահատել, կարևորել տեղի ունեցածը:

Նման արդյունքներ, բնականաբար, չկային, սակայն հայտարարությունը, գերկարևորելով հեղափոխության արժեքը, քարտ-բլանշ էր ապահովում ետհեղափոխական գործողությունների համար:

Ետհեղափոխական առաջին ամիսներին դիսկուրսը և քաղաքական հռետորաբանության շեշտադրումները ընկալելու տեսանկյունից հեղափոխության գերկարևոր դիտարկումը էական է: Հետազոտությունը ցույց տվեց, որ այս փուլում այս հնարքը մեկ այլ նպատակ էլ ունի՝ ***հեղափոխությունը ընդունելի դարձնել միջազգային կառույցների, կազմակերպություններ, դաշնակից պետությունների համար*** :

Ժամանակակից աշխարհում հեղափոխությունների, քաղաքացիական շարժումների հաջողությունը միայն ներքաղաքական ու ներհասարակական գործիքակազմը չի պայմանավորում: Կարևոր են արտաքին ուժերի վերաբերմունքն ու գործողությունները: Հայաստանի արտաքին քաղաքականությունը բազմավեկտոր էր ու նոր իշխանությունների հայտարարությունները պետք է ամրագրեին կամ շարունակականության կամ փոփոխությունների իրավիճակը: Այս հայտարարությամբ Ն. Փաշինյանը, փաստորեն վերահաստատեց արտաքին քաղաքական կուրսի շարունակականությունը առնվազն այս փուլի համար:

Այս ու նման հայտարարությունները դարձան նաև նոր իշխանության՝ միջազգային հարթակում դիրքավորման քայլ: Ժամանակակից աշխարհը պահպանում է «վախը» հեղափոխություններից ու հեղափոխական շարժումներից: «Արաբական գարունը»,

տարբեր հեղափոխական շարժումները՝ կասկածելի ու վիճարկելի արդյունքներով, լուրջ ազդեցություններ ունեն միջազգային քաղաքական գործընթացների վրա։

Կովկասյան տարածաշրջանում նույնպես հեղափոխական շարժումները կարող են խնդրահարույց լինել/դառնալ՝ չլուծված հակամարտությունների ծանր ժառանգության պատճառով։

Ուսումնասիրությունն արձանագրեց հեղափոխությունը և արտաքին և ներքին լսարանի համար ճիշտ դիրքավորելու մեկ ձևակերպում ևս։ Այն ներկայացվեց և ներկայացվում է որպես *«սիրո և համերաշխության»* հեղափոխություն։

Այս ձևակերպումը նույնպես հիմնված է իրավիճակի ու զարգացումների գնահատականի վրա և հեղափոխությունը՝ արդյունքների ու հետևանքների տեսանկյունից, դիրքավորում է որպես համակարգային երևույթ։

«Եվ ուրեմն, սիրելի՛ հայրենակիցներ, ձեր վերադարձի ժամը եկել է» արտահայտությունը ամրագրում է հեղափոխության համակարգային բնույթը։ Այն նախկին՝ անհատին քաղաքական գործընթացներից դուրս մղած, կաշառքի, սպառնալիքների, ճնշումների միջոցով անհրաժեշտ արդյունք ապահոված համակարգի ապամոնտաժման հայտարարություն է. ***արտոնյալներ չեն լինելու, ընտրություններ չեն կեղծվելու, ընտրակաշառք չի բաժանվելու։*** Այս ամենը բացակայությունը նշանակում է նախկին համակարգի հնարավորությունների զրոյացում։

Ամփոփենք. 2018թ. մայիսի 8-ի ելույթով Ն. Փաշինյանը մի կողմից արձանագրեց հեղափոխության հաղթանակը և մյուս կողմից՝ ձևակերպեց անելիքները ազգային (Արցախ), իրավական, քաղաքական և տնտեսական և քաղաքացիական հարթություններում։

Սա նոր քաղաքական ***հռետորաբանության, դիսկուրսի ու նարրատիվի արձանագրում է այն պայմաններում, երբ նախորդ ռեժիմը մեծամասնություն ունի Ազգային ժողովում։***

Այս շեշտադրումները կարևոր են, որովհետև քաղաքացին դառնում է այն հիմնական ուժը, որ պետք է ապահովի նոր իշխանության լեգիտիմությունը՝ մինչև նոր խորհրդարանական ընտրությունների անցկացումը։

Չնայած նրան, որ ձևակերպումներում քաղաքացին ու քաղաքացիական առանցքային են, բովանդակային տեսանկյունից հասկացությունները դեռևս հստակ չեն։ Ակնհայտ է, որ ընդամենը մի քանի օրում Ն. Փաշինյանն ու քաղաքական համախոհները չեն կարողացել հեղափոխական հռետորաբանությունը ամբողջովին համապատասխանեցնել դե-յուրե իշխանության քաղաքական հռետորաբանությանն ու գիտակցելով առաջիկա քաղաքական զագացումների հնարավոր լարվածությունը,

«Ժողովրդին, հրապարակին» իշխանությունը վերադարձնելու ու նրանց հաշվետու լինելու գաղափարը դեռևս պահպանում են որպես դիսկուրս ստեղծող կարևոր բաղադրիչ:

Հաշվետվողականությունը, «Ժողովրդի իշխանություն» ձևավորելու մասին հայտարարությունը, որ շատ ակտիվ էր ետհեղափոխական առաջին ամիսներին եթե շահարկում էլ չէ, ապա քաղաքագիտական հնարք է, որ կիրառվում է տարբեր նպատակներով:

Մինչև խորհրդարական ընտրությունները, երբ «Քաղաքացիական պայմանագիր»-ը դեռևս մեծամասնություն չուներ խորհրդարանում, այս հնարքը կիրառվում էր հնարավոր ռևանշը կանխելու, զսպելու, հակահեղափոխության վերադարձն արգելափակելու համար:

Սրա թերևս ամենանշանային դրսևորումը, որ հսկայական ազդեցություն ունեցավ, Ազգային Ժողովը շրջափակելու Ն. Փաշինյանի կոչն էր 2018թ. հոկտեմբերի 2-ին:

Մարդաբանական տեսանկյունից խնդրին մոտենալիս այս գործողությունում տեսնում ենք քաղաքագիտական մի քանի հնարք.

- ✓ ԱԺ-ն, ըստ վարչապետի նախաձեռնում է քայլեր, որ կարող են սկիզբ դառնալ հակահեղափոխության և ռևանշիզմի:
- ✓ Այս իրավիճակում վարչապետ Ն. Փաշինյանը վերստին հանդես է գալիս որպես հեղափոխության առաջնորդ
- ✓ և դիմում հեղափոխական ավանդույթը, այն է՝ փողոցային պայքարը վերականգնվելու կոչով. շատ արագ շրջափակվում է հակահեղափոխության հնարավոր տարածքը:

Սրանով, ըստ էության, իրականացվում է նաև ժողովրդական արդարադատություն. ձևավորում է ժողովրդական դատարան (ի դեմս ԱԺ դիմաց հավաքված հազարավոր մարդկանց), որ կայացնում են ժողովրդական վճիռ (Ն. Փաշինյանը ստանձնում է նաև ժողովրդական դատավորի դերը):

Մանիպուլյատիվ, սակայն դիսկուրսի վրա էական ազդեցություն ունեցող էր հաջորդ հնարքը, երբ հավաքի ընթացքում ստորագրվեցին ԲՀԿ-ական և ՀՅԴ-ական նախարարների ազատման մասին որոշումները:

Ակնհայտ է, որ այս գործողությունը դարձվում էր ետհեղափոխական Հայաստանի սիմվոլներից մեկը, երբ անհրաժեշտության դեպքում ժողովրդի արդարադատությունը և օրենքը կարող են հակադրվել, բնականաբար՝ առաջինի առավելության ու գերակայության պայմանով:

Հրապարակը կայացնում է որոշումներ, որոնց լեգիտիմությունը չի կարող կասկածի տակ առնվել, քանի որ հրապարակում ժողովրդի իշխանությունն է, իսկ ժողովրդի իշխանությունը չի կարող ոչ լեգիտիմ լինել:

Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը «ժողովրդական և ժողովդրի հեղափոխության» գաղափարը «բրենդավորելով», այն բազմիցս ու բավականին ակտիվ օգտագործեց նաև հետագայում, մինչև հեղափոխության հաղթանակի վերջնական, դե-յուրե ամրագրումն ու խորհրդարանում մեծամասնություն ստանալը:

Սրանով սակայն, «ժողովրդի հեղափոխության ու ժողովրդի հաղթանակի» բրենդավորումը չավարտվեց:

Այն շարունակում է կիրառվել մինչ օրս: Այսօր իշխանությունն իրեն արդեն դիրքավորում է որպես *«ժողովրդի քվե ստացած»,* ժողովրդի անվերապահ վստահությունը վայելող, ինչը կարևոր է հատկապես արտախորհրդարանական ընտրության հետ երկխոսության կամ բանավեճում, քանի որ հնարավորություն է տալիս շահարկել ***«ո՞վ կարող է խոսել ժողովրդի անունից»*** դիսկուրսը:

Փաստ է, որ «Իմ քայլը» դաշինքը, ետհեղափոխական ոգևորվածության և Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության մեջ ամենաարդարներից մեկը համարվող ընտրությունների արդյունքում բացահայտ մեծամասնություն ստացավ խորհրդարանում:

Փաստ է նաև (դա չեն թաքցնում կուսակցության անդամները), որ այդ աննախադեպ արդյունքը երկու հիմնական բաղադրիչ ուներ.

- *ետհեղափոխական ոգևորություն, որ բարձր մակարդակի վրա էր*
- *և Ն. Փաշինյանի անձնական հեղինակություն և աննախադեպ բարձր վարկանիշ, որ ապահովեց հաղթանակը խորհրդարանական ընտրություններում:*

Բացի Ն. Փաշինյանից և քաղաքական դաշտում ակտիվ մի քանի գործչից (Ա. Միրզոյան, Ս. Միքայելյան, Լ. Նազարյան), «Իմ քայլի» ցուցակով խորհրդարան անցած պատգամավորների հիմնական մասն անծանոթ էր հասարակությանը: Այս վերապահումով հանդերձ, կարելի է համարել, որ արդարացված է «որպես ժողովրդի իշխանություն դիրքավորվելը», եթե այն, իհարկե չի շահարկվում:

Տեքստերի ու նյութերի վերլուծությունը, սակայն, ցույց տվեց, որ որոշ շահարկումներ առկա են: Դրանք ձևափոխում են քաղաքական պայքարի ու քաղաքական գործունեության ընդհանուր բովանդակությունն ու կարևորում անձնական/անհատական հարթությունը, օգտագործում Ն. Փաշինյանի բարձր վարկանիշը:

Քաղաքական գործընթացում, մասնավորապես խորհրդարական ընտրություններում, քվե ստանում է ոչ միայն անձը, այլ ծրագիրը: Ըստ այդմ, քվեն կամ վստահությունը «գործում են» որպես կանոն այն դեպքում և այն սահմանով, որ սահմանով իշխող քաղաքական ուժի գործողություններն են նախընտրական ծրագրի շրջանակներում: Հակառակ դեպքում անընդհատ «վստահությունը շեշտադրելը»

քաղաքական տեսանկյունից արդարացված չէ և ընդամենը հնարք է քաղաքական ընդդիմախոսների հետ բանավեճերում:

Անորոշությունը, հասկացությունների կամայական մեկնաբանությունների փաստերը, որ կային մայիսի 8-ի ելույթում, պահպանվում են առաջին ամիսների այլ ելույթներում նս:

Դրանցից հաջորդը, որ նշանային է ու կարևոր արդեն դե-յուրե իշխանության քաղաքական հռետորաբանությունը ընկալելու տեսանկյունից, ***2018թ. հունիսի 7-ին, Կառավարության ծրագիրը ներկայացնելիս Ն. Փաշինյանի ԱԺ-ում ունեցած ելույթն է:***

Այն ծրագրային լինելուց զատ, յուրօրինակ երկխոսություն է «սիրելի ժողովրդի, Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացու հետ», որ մի կողմից ցույց է տալիս կառավարության անելիքները, մյուս կողմից դեռևս պահպանում է հեղափոխական հռետորաբանությունը, քանի որ ապահովված չէ ամբողջական իշխանությունը. ԱԺ-ում ՀՀԿ մեծամասնությունը պահպանվում է, ինչը լուրջ վտանգ է վարչապետ Փաշինյանի ու նրա քաղաքական թիմի համար:

Ելույթի բավականին մեծ հատվածը վերաբերում է հենց հեղափոխության արդյունքի քննարկմանը, որ փոխեց իշխանության ձևավորման որակն ու բովանդակությունը ՀՀ-ում.

*«- Իշխանության ձևավորումը բացառապես **ժողովրդի ազատ** կամարտահայտման միջոցով:*

*- Իրավունքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության վրա հիմնված **ազգային միասնությունը և քաղաքացիական համերաշխությունը**».*[26]

Սրանք այն հիմնական խնդիրներն են, որ պետք է լուծի հեղափոխությունը: *«Սրա համար անհրաժեշտ բոլոր պայմաններն առկա են, որովհետև Հայաստանի Հանրապետության **հպարտ քաղաքացին** ի վերջո կարողացավ ջարդուփշուր անել ընտրակաշառքի, հարկադրանքի, վախի ու կախվածության ստրկացնող շղթաները, և հիմա եկել է ժամանակը այս իրողությունը որպես հանրային պայմանավորվածություն և մշակույթ արձանագրելու համար».*[27]

Արձանագրելով հեղափոխության ըստ էության հաղթանակը, Ն. Փաշինյանը, առաջին անգամներից մեկը իր ետհեղափոխական շրջանի ծրագրային ելույթներում, ձևակերպում է հեղափոխության անելիքներից թերևս ամենակարևորը պետության կառավարման և նոր իշխանության քաղաքական գործունեության ոլորտում, այն է՝ *հանրային պայմանավորվածություն և մշակույթ:*

---

[26] Վարչապետ Նիկոլ Փաշինյանին ելույթն Ազգային Ժողովում կառավարաւոյության ծրագիրը ներկայացնելիս. 07.06.2018թ.: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/06/07/Nikol-Pashinyan-Speech-National-Assembly/

[27] Նույն տեղում:

Հաջորդ հատվածներից մեկում, սակայն, դարձյալ կիրառվում է քաղաքագիտական հնարք, երբ տարաբովանդակ մի քանի հասկացություն նույնականացվում են՝ հեղափոխության արդյունքի և մասնակից անհատի կարևորությունը շեշտադրելու նպատակով.

«Բայց այդ խնդիրները չեն լուծվի, եթե մենք բոլորս՝ շարքային ոստիկանից, զինծառայողից, սկսած մինչև նախարար ու վարչապետ աշխատանքի զգացողությունը չփոխարինենք առաքելության զգացողությամբ… Մենք պետք է հասկանանք, որ սովորական ժամանակներում չենք ապրում, մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մեզնից յուրաքանչյուրը հերոսանալու, մաքրագործվելու, հայրենիքին ու ապագային ծառայություն մատուցելու պատմական հնարավորություն ունի…».[28]

Բովանդակային տեսանկյունից դիտարկելիս այս հայտարարությունը որևէ խնդիր չի լուծում, որովհետև հանրային կամ պետական ծառայությունը ենթադրում է կոնկրետ գործողություններ և պատասխանատվություն։ Էմոցիոնալ մակարդակում հայտարարությունն ազդեցիկ է, սակայն ողղված է ոչ թե հասարակությանն ընդհանրապես, այլ առաջին հերթին քաղաքական թիմին, որ եկել է իշխանության ու այս դեպքում արդեն պետական ծառայության համակարգում պետք է ամրագրի հեղափոխության արդյունքն ու հաղթանակը։

Ուսումնասիրությամբ արձանագրվեց քաղաքական դիսկուրսի ձևավորման/դրա վրա ազդելու մեկ այլ հնարք, որ բազմիցս կիրառել և կիրառում են Ն. Փաշինյանը, ինչպես նաև նրա մյուս թիմակիցները։

Հեղափոխությունները, գաղափարներ շրջանառելուց զատ, որպես կանոն, պետք է ունենան կոնկրետ և որոշակի թիրախներ, առանց որոնց գաղափարները շատ արագ արժեզրկվում են ու կորցնում հանրային կարևորությունը։ ***«Քայլ արա, մերժիր Սերժին»***[29] կարգախոսը Ս. Սարգսյանի հրաժարականից հետո այլևս արդիական չէր, հետևաբար հասարակության/քաղաքացիների վրա նույն ազդեցությունը կարող էր չունենալ։

Աղքատության հաղթահարման, աշխատավարձերի բարձրացման, քաղաքացու արժանապատիվ կյանքի ապահովման խոստումները, որ տրվել էին քաղաքացիական անհնազանդության ու դրան նախորդող ժամանակահատվածում՝ «Ելք» դաշինքի գործունեության ընթացքում, պետք է դառնային պետական քաղաքականություն։

Հեղափոխության ընթացքում, համաժողովրդական քաղաքացիական ընդվզումը ակտիվացնելու նպատակով բազմաթիվ հայտարարություններ էին արվել թալանված

---

[28] Նույն տեղում։

[29] Չնայած արդիականությունը մասամբ կորցնելուն, այս կարգախոսը, այլ դրսևորումներով ու ձևակերպումներով մշտապես առկա է ետհեղափոխական դիսկուրսում երկու հիմնական տարբերակով. *հավաքական նախկիններ, որ պետք է վերադարձնեն թալանած ամեն կոպեկն ու ներողություն խնդրեն թալանի համար և կոնկրետ նախկիններ, ում նկատմամբ քրեական գործեր են հարուցվել տարբեր մեղադրանքներով՝ Ս. Սարգսյան, Ռ. Քոչարյան, Գ. Բեգլարյան, Բ. Բեգլարյան ու բազմաթիվ այլ նախկին պաշտոնյաներ ու բիզնեսմեններ։*

միլիարդների մասին։ Ըստ այդմ, կոռուպցիան հաղթահարելը, կոռուպցիոներներին պատժելն ու թալանածը վերադարձնելը հասարակությանը ներկայացվել էր որպես քաղաքական օրակարգի խնդիր, որի լուծումը կարող է դառնալ նաև հասարակության բարեկեցության նկատելի աճի հիմք։

Արդեն որպես վարչապետ կառավարության ծրագիրը ներկայացնելիս այս գաղափարը դրվում է շրջանառության մեջ. *«Որևէ մեկը չմտածի, թե կարող է խուսափել պատասխանատվությունից. բոլոր **կոռուպցիոներներին հայտնաբերելու ենք ու հանենք նույնիսկ ամենահեռու և ամենամութ ծակերից։***

*Երկիշխանության մասին… մեկնաբանությունները ոչ միայն ծիծաղելի են, այլև վկայում են, որ դեռ կան մարդիկ, ովքեր չեն հասկացել և շարունակում են չհասկանալ, թե ինչ է կատարվում Հայաստանում: Սկսած 2018 թվականի մայիսի 8-ից Հայաստանում չկա և չի կարող լինել երկիշխանություն, որովհետև Հայաստանում **հաստատված է աներկբա և անառարկելի ժողովրդի իշխանություն ի դեմս գործող վարչապետի և կառավարության:** Ես հույս ունեմ, որ որևէ մեկը չի տրվի այս թեզի ճշմարտացիությունը էքսպերիմենտներով ստուգելու գայթակղությանը: Իհարկե, նման փորձերը ժողովրդի և պետության համար որևէ սպառնալիք ստեղծել չեն կարող, բայց դրանց պոտենցիալ հեղինակներին խորհուրդ եմ տալիս լրջանալ, հակառակ դեպքում ժողովրդական իշխանությունն ինքը ստիպված կլինի նրանց լրջացնել».*[30]

Շարունակելով նույն թեման, Ն. Փաշինյանը բերում է մեկ այլ փաստարկ.

«Շատ է ասվում, որ մեր ծրագրի մեջ չկան թվեր… Եթե այդ թվերն այդքան նկատելի չեն, ես կներկայացնեմ: Ի՞նչպիսին է արդեն Հայաստանում բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում կոռուպցիայի մակարդակը, ես պաշտոնապես հրապարակում եմ այդ թիվը՝ զրո, ի՞նչպիսին է լինելու Հայաստանում արտոնյալների տոկոսը, ես պաշտոնապես հրապարակում եմ այդ թիվը՝ զրո, Հայաստանում խոշոր բիզնեսն ամսական ո՞րքան «նալոգ» պետք է տա հանրապետության վարչապետին՝ ես պաշտոնապես հայտարարում եմ այդ թիվը՝ զրո, Հայաստանում ինչպիսի և քանի մենաշնորհներ պետք է գոյություն ունենան՝ ես պաշտոնապես հայտարարում եմ այդ թիվը՝ զրո»:

Եվ ելույթի վերջում, արդեն քաղաքական հերթական հնարքը կիրառելով, գործողություններ կատարելու կամ չկատարելու իրավունքը թողնվում է ոչ թե խորհրդարանին, այլ վերապահվում է ժողովրդին, պահելով հեղափոխական պաթոսը.

«բայց ես ՀՀ վարչապետ ընտրվել եմ ոչ որպես «Ելք» դաշինքի թեկնածու և ոչ էլ որպես որևէ այլ խմբակցության թեկնածու: Ես վարչապետ ընտրվել եմ որպես ՀՀ ժողովրդի թեկնածու: Եվ հիմնական քաղաքական գործոնը, որ պահելու է կառավարությունը՝ ժողովրդի վստահությունն է: … Եվ որևէ մեկը թող չմտածի, որ ինձ կամ կառավարությանը լավություն է անելու՝ կառավարության ծրագրին կողմ քվեարկելով: Մենք որևէ մեկի լավության կարիքն Ազգային ժողովում չունենք: Ուզում եք կողմ քվեարկեք, ուզում եք դեմ քվեարկեք: Մենք ունենք ժողովրդի

[30]Ն. Փաշինյանի ամփոփիչ ելույթը https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/06/07/Nikol-Pashinyan-Speech-National-Assembly/

վստահությունը և մենք ասել ենք, որ ժողովրդի վստահությունը պետք է դառնա կոնկրետ քաղաքական արդյունք և դա կդառնա կոնկրետ քաղաքական արդյունք անկախ նրանից՝ դուք դա ուզում եք, թե ոչ»։[31]

Եռահեղափոխական շրջանի առաջին ամիսների քաղաքական հռետորաբանության կուլմինացիան ***Ն. Փաշինյանի ելույթն էր որպես վարչապետ պաշտոնավարման 100 օրվան նվիրված հանրահավաքում, որ քաղաքական բազում հնարքների կիրառմամբ, բավարար չափով չփաստարկված հայտարարություններով կարողացավ ապահովել հուզական ֆոնը, սակայն խնդիրներ ստեղծեց նաև հետագա գործունեության համար.***

Ելույթը ընդարձակ է, ուստի ներկայացնենք հիմնական շեշտադրումները, որ արվել են դրանում.

Իրադարձության բացառիկություն, համազգային համախմբում. *«Սիրելի՛ ժողովուրդ, այսօր բացառիկ օր է և բացառիկ իրադարձություն: Այսպիսի բան Հայաստանի Հանրապետության կյանքում առաջին անգամ է տեղի ունենում: Այսօր այս հրապարակում են գտնվում ՀՀ հարյուր հազարավոր քաղաքացիներ…,*

Ժողովրդի հաղթանակի փաստի անընդհատ շեշտադրում՝ *Սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, ես եկա և ասացի ձեզ, որ դուք հաղթեցիք, և ձեր հաղթանակը այն չէ, որ ես ընտրվել եմ ՀՀ վարչապետ: Հաղթանակն այն է, որ դուք եք որոշել, թե ով լինի ՀՀ վարչապետ, և սրանից հետո ընդմիշտ դուք և միայն դուք եք որոշելու, թե ով լինի ՀՀ վարչապետ: … բայց հիմա այս ամբիոնից ուզում եմ ի լուր աշխարհի ասել, որ բացառիկ և հզոր այն ուժը, որը հնարավոր դարձրեց այդ աննախադեպ իրադարձությունը,* ***հայ ժողովուրդն է, ՀՀ հպարտ և արժանապատիվ քաղաքացին,*** *Սփյուռքի հայությունը, աշխարհում ապրող յուրաքանչյուր հայ, ով հնարավոր դարձրեց աննախադեպ այդ իրադարձությունը:*

Հաղթանակի իրացման բացառիկության շեշտադրում՝

- *Այս ֆոնին, սակայն, ուզում եմ նշել, որ մեր ոչ բռնի, թավշյա ժողովրդական հեղափոխությունը* ***բացառիկ է ոչ միայն իր ձևով, այլ նաև իր բովանդակությամբ****…*
- *Եվ հիմա ուզում եմ ասել, թե դա ինչ է նշանակում. գործնականում դա նշանակում է, որ հեղափոխական այս հրապարակը, հեղափոխական Հանրապետության հրապարակը հռչակվում է որպես* ***ժողովրդական իշխանության բարձրագույն մարմին:*** *Սա նշանակում է, որ կառավարությունն ինչպես ձևավորվել է այս հրապարակում, կառավարությունը սրանից հետո հաշվետու է այս հրապարակին, և սրանից հետո կառավարությունը ենթարկվում է այս հրապարակին:*
- *Ժողովո՛ւրդ, այս առումով թույլ տվեք համարձակվել պնդել, որ այն իրադարձությունը, որ տեղի է ունեցել այս հրապարակում, պատմագիտական առումով կարող է հիշատակվել հետագայում նույն մակարդակի վրա, ինչպես հին Աթենքում՝ ժողովրդավարության, դեմոկրատիայի հաստատումը, և, ուրեմն, Հայաստանի Հանրապետությունը պատմական*

[31] https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/06/07/Prime-Minister-Nikol-Pashinyans-speech/: Ն. Փաշինյանի ամփոփիչ ելույթը կառավարության ծրագիրը ներկայացնելուց հետո:

հեռանկարում կարող է հիշատակվել այնպես, ինչպես հիմա հիշատակվում է հին Հունաստանը: Երևանը կարող է հիշատակվել այնպես, ինչպես հին Աթենքը, և Հանրապետության հրապարակը կարող է դառնալ 21-րդ դարի մարդկության նորագույն ժամանակների ազորան, որտեղ ստեղծվել է ժամանակակից քաղաքակրթությունը: Ահա այսպիսինն է մեր իրադարձության պատմական և պատմագիտական նշանակությունը, և այդ իրադարձությունը դուք եք ստեղծել:

- *Մենք ձեզ խոստացել էինք, որ հերթով բացահայտելու ենք… բոլոր թալանչիներին, և մենք հերթով բացահայտում ենք… բոլոր թալանչիներին: Բայց ես ուզում եմ ասել, որ կոռուպցիայի դեմ պայքարում մեր կարևորագույն խնդիրը ոչ թե բանտերը լցնելն է, այլ ձեզնից գողացված գումարները լումա առ լումա ժողովրդին և պետությանը վերադարձնելը…».*[32]

Ելույթը, ամրագրելով հեղափոխության հաղթանակը ավելի պոպուլիստական է նախորդի համեմատությամբ, իսկ Ն. Փաշինյանն այս դեպքում դեռ շարունակում է ներկայանալ որպես ավելի շատ հրապարակի, քան աշխատասենյակի գործիչ:

Զգայականությունը, թիրախավորված շեշտադրումները՝ հեղափոխության բացառիկություն, քաղաքացու, ժողովրդի համամասնակցություն այս բացառիկ գործընթացին, որ առկա են ելույթի ողջ ընթացքում, նպատակ ունեն պահպանել ոգևորվածությունը, շարունակական դարձնել հեղափոխական դիսկուրսը: Սա ներքին լսարանին, ժողովրդին ուղղված խոսք է:

Նույն ելույթում, սակայն, առկա են ձևակերպումներ, որ հնարավոր է որակել որպես հեղափոխական գործընթացի շահարկում՝ վերջինիս բացառիկությունը շեշտադրելու նպատակով: Բացառիկությունը, իր հերթին, դիտարկվում է որպես հեղափոխության արդյունքի ինստիտուցիոնալիզացիայի այնպիսի մակարդակ, որ համադրելի է համաշխարհային պատմության էտալոնային, համակարգաստեղծ օրինակների հետ: Այս ամենն արվում է մի քանի հիմնական գործիքի օգնությամբ.

- *Հրապարակը հռչակվում է ժողովրդական իշխանության բարձրագույն մարմին,*
- *Հաշվետվողականությունը դե-յուրե հարթությունից տեղափոխվում է հրապարակ:*

Սրանք քաղաքական գործընթացների տրամաբանությանը հակասող, անիրականանալի հայտարարություններ են, որ հակասության մեջ են նաև Ն. Փաշինյանի տարբեր տեքստերի հետ. *ժողովրդավարություն և ամբոխավարություն հասկացությունները նույնականացվում են, դիսկուրսի մակարդակում մոդելավորվում է հաշվետվողականության այնպիսի մեխանիզմ, որ չի կարող իրագործվել և ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, չի իրականացվել ցայսօր:*

Հաջորդ շահարկումը *պատմական գործընթացի, իրողությունների ու համակարգաստեղծ փոփոխությունների կամայական մեկնաբանությունն է.* Աթենական

[32] https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/08/17/Nikol-Pashinyan-100-day-rally/: Ն. Փաշինյանի ելույթը պաշտոնավարման 100-օրվա առթիվ հրավիրված հանրահավաքին:

ժողովրդավարության, ազորայի, այլ հասկացությունների կամայական մեկնաբանությամբ Ն. Փաշինյանը ստեղծում է անհամեմատելի հասկացությունների համեմատության հարթակ, ազորան ու Հանրապետության Հրապարակը դիտարկում որպես նույնական ու համադրելի իրողություններ, միաժամանակ խախտելով պատմագիտական ու մարդաբանական հետազոտությունների մի քանի կանոն. ժամանակագրություն, համեմատվող հասկացությունների բովանդակության ձևակերպում և այլն։

Եվ վերջին շահարկումը, որ առկա է տեքստում՝ քաղաքական կառավարման կամ ինքնակազմակերպման մոդելի՝ մշակութաբանական տեսանկյունից այլ բովանդակություն ունեցող հասկացության՝ քաղաքակրթության նույնականացումն է. «նորագույն ժամանակների ազորա, որտեղ ստեղծվել է ժամանակակից քաղաքակրթությունը»։

Այսպիսով, վերլուծված ելույթները հնարավորություն են տալիս արձանագրել, որ ետհեղափոխական առաջին ամիսներին իշխանությունը և անձամբ վարչապետ Ն. Փաշինյանը

- ✓ դեռևս դիրքավորվում են որպես հեղափոխականներ,
- ✓ քաղաքական դիսկուրսը ձևավորում ու պահում են հեղափոխության հիմնարար հասկացությունների շուրջ,
- ✓ ժողովրդի իշխանությունը հակադրում են խորհրդարանի իշխանությանը, քանի որ այնտեղ դեռ մեծամասնություն են նախորդ ռեժիմի ներկայացուցիչները։

Ն. Փաշինյանը, այս ամենը ավելի հուզական ու ազդեցիկ դարձնելու նպատակով շարունակում է կիրառել այն հնարքները, որ առկա էին մինչև Ս. Սարգսյանի հրաժականը՝ քաղաքական ծայահեղականացված հռետորաբանություն, իշխանության թիրախավորում, և այլն։

Կիրառվում են նաև դիսկուրսի վրա ազդող այլ հնարքներ. ամբոխահաճո հայտարարություններ, հեղափոխության բազային հասկացությունների անընդհատ շեշտադրում՝ *հպարտ քաղաքացի, հաղթանակած ժողովուրդ, հաղթանակի բացառիկություն։*

Որոշ դեպքերում, հատկապես պաշտոնավարման 100 օրվան նվիրված ելույթում առկա են շահարկումներ՝ պատմագիտական համեմատությունների, բովանդակային կամայական մեկնաբանությունների, սոցիալ-մշակութային տեսանկյունից անհամեմատելի հասկացությունների՝ ազորա և հեղափոխական հրապարակ, նույնականացման տարբերակով։

Սրանք, իհարկե, ավելի շատ հռետորաբանական և քաղաքական դիսկուրսի ձևավորման նպատակ ունեցող հնարքներ են, սակայն գալիս են հաստատելու վերը

բերված միտքը, որ ետհեղափոխական առաջին ամիսներին կառավարությունն ու վարչապետ Ն. Փաշինյանը դեռ իրենց դիրքավորում են որպես հեղափոխականներ, այլ ոչ թե իշխանություն ստացած կառավարիչներ:

Հիմնականում հեղափոխական է նաև քաղաքական հռետորաբանությունը, ինչը մասամբ արադարացված է. Ազգային ժողովը շարունակում է աշխատել նախկին կազմով, հետևաբար, հնարավոր են անկանխատեսելի զարգացումները:

Հաջորդ պատճառը, որ նպաստում է «անցումային» քաղաքական հռետորաբանություն ու դիսկուրսի պահպանմանը, կառավարման համակարգին ադապտացիան է: Հեղափոխականից իշխանություն, կառավարիչ դառնալը ոչ միայն Հայաստանում, այլ բազմաթիվ ետհեղափոխական միջավայրերում է բարդություններ առաջ բերում ու առաջնային դարձնում բալանսավորման խնդիրը: Իրական կառավարման և հրապարակային ժողովրդավարության մեթոդների բալանսավորման խնդիր ուներ նաև հայաստանյան իշխանությունը, հատկապես որ, ինչպես տեսանք, հեղափոխական ոգևորվածությունը պահելու հրամայականով պայմանավորված, ձևավորել էր բացարձակ ու անսահմանափակ իշխանություն ունեցող հպարտ քաղաքացու կերպար, որի իրավունքները, սակայն, արդյունավետ կառավարում ապահովելու համար պետք է սահմանափակվեին:

Այսինքն՝ «հրապարակի» դիսկուրսը «կառավարման» դիսկուրսի պետք է վերափոխվեր այնպես, որ քաղաքացին շարունակեր մնալ կարևոր, միաժամանակ չվտանգելով արդյունավետ կառավարումը:

Սա կարելի է համարել ետհեղափոխական քաղաքական հռետորաբանության առաջին փուլի ընդհանուր բնութագիր:

4.2 Հռետորաբանության փոփոխությունը. «հեղափոխություն» VS «կառավարում»

Հետագա ամիսներին, երբ արդեն լուծվեցին հնարավոր դիմադրության հաղթահարման խնդիրները ու «Իմ քայլ»-ը մեծամասնություն ստացավ խորհրդարանում, քաղաքական տեքստը, հռետորաբանությունը դառնում են ավելի բալանսավորված, հավասարակշռված: Այսինքն, քաղաքական հռետորաբանության փոփոխությունների նոր պայմանական փուլի սկիզբը կարելի է համարել խորհրդարակական ընտրությունները, որ ապահովեցին ամբողջական իշխանություն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ու «Իմ քայլը» դաշինքի համար: Խորհրդարանական ընտրություններում հաղթանակն ու իշխանության դե-յուրե ամրագրումը «թուլացրեցին» հեղափոխության բացառիկության զգայական բաղադրիչն ու մղեցին ավելի սթափ, առարկայական վերլուծություններին, ինչը և արեց Ն. Փաշինյանը 2019թ., նորընտիր Ազգային ժողովում ՀՀ

կառավարության ծրագիրը ներկայացնելիս:[33] Այս ելույթում հեղափոխության բացառիկությունը շեշտադրելուց զատ, ներկայացվում է հեղափոխության տեխնոլոգիական ողջ զինանոցը: Ելույթը կարելի է դիտարկել նաև որպես հեղափոխական պաթոսի ավարտի փուլ: Սկիզբ է դրվում քաղաքական դիսկուրսի ու քաղաքական հռետորաբանության փոփոխություններին և «հրապարակի» քաղաքացին աստիճանաբար դարձվում է «հասարակության անդամ» քաղաքացի՝ իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև դրանց իրացման անհրաժեշտության շեշտադրմամբ:

«Իմ քայլը» դաշինքը 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցում է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության վերջնական հաղթանակը ամրագրելու եւ իշխանությունը Հայաստանում անշրջելիորեն ժողովրդին վերադարձնելու համար:

«Իմ քայլը» դաշինքը ձեւավորված է ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունն առաջնորդած քաղաքական թիմի ներկայացուցիչներից եւ նրանց աջակցած ուժերից:

Դաշինքի քաղաքական թիմը այսօրվա դրությամբ կատարել է ժողովրդի առաջ իր ստանձնած բոլոր պարտավորությունները».[34]

Այս իրողությունը՝ ընտրությունները որպես իշխանությունը ժողովրդին վերադարձնելու նպատակ ունեցող քայլ դիտարկելը արձանագրեց նաև Ն. Փաշինյանը Ազգային ժողովում կառավարության գործունեության 2019թ. ծրագիրը ներկայացնելիս: Այս ելույթը կարելի է դիտարկել նաև որպես ետհեղափոխական Հայաստանի զարգացումների առաջին շրջանի ավարտ և նոր փուլի սկիզբ, որը այս կամ այն կերպ ձևակերպված ու հանրային դաշտում ներկայացված թեզերը դնում է քաղաքական դիսկուրսի հիմքում ու վերջնական ձևակերպում տալիս քաղաքացու, քաղաքացիական հասարակության, իշխանության վերաբերյալ ընկալումներին:

Ելույթը մանրամասն է, ոլորտային անդրադարձերով:

Հիմնական գաղափարներից մեկը, որ դրված է ելույթի հիմքում, «հնի ու նորի» բովանդակային, աշխարհայացքային տարբերություններն են առանցքային խնդիրների շուրջ՝ իշխանություն, բիզնես, օրենքի առաջ հավասարություն, ինքնիրացման հնարավորություններ:

Արձանագրելով այդ բախումը, Ն. Փաշինյանը միաժամանակ արձանագրում է զարգացման նոր փուլի սկիզբը, որի հիմքում քաղաքացին է ու իշխանության նոր ընկալումը:

---

[33] ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի ելույթը ՀՀ ազգային ժողովում՝ կառավարության ծրագիրը ներկայացնելիս: 12.02.2019: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/02/12/Nikol-Pashinyan-Speech-National-Assembly/

[34] «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր (ԱԺ, 2018) http://geopolitics.am/archives/15500:

- ✓ *«…Մեր հեղափոխությունն, այո, տեղի է ունեցել այն ժամանակ, երբ քաղաքացին ինքն իրեն հավատացել է…*
- ✓ *…Եվ մեր պատասխանատվությունը կրկնակի մեծ է և մենք այո հիմա որպես պետական պաշտոնյաներ պետք է առավել ուշադիր լինենք մեր ասած խոսքի, մեր ամեն շարժուձևի, մեր կերածի, մեր հագնվածի, մեր խմածի, մեր դեմքի արտահայտության նկատմամբ…*
- ✓ *…Ասում են՝ մի պատգամավոր հայտարարեց, որ իրենք իշխանություն չեն: Այո, իշխանություն չենք: Մենք կառավարություն ենք, մենք իշխանություն չենք:*
- ✓ *Իշխանությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացին է, սա նորությո՞ւն է որևէ մեկի համար: Եվ դուք էլ իշխանություն չեք, դուք ընդամենը խորհրդարանի պատգամավոր եք, դուք օրենսդիր իշխանություն եք:*
- ✓ *Բայց Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովուրդն է իշխանության աղբյուրը, ժողովուրդն է փոփոխության աղբյուրը, ժողովուրդն է հաղթողը,*
- ✓ *այո, պարտվողը ես եմ՝ անձամբ, իսկ հաղթողը ժողովուրդն է: Այդ որ ասում եք հաղթանակը բազում տերեր ունի, իսկ պարտությունը որբ է, եթե նույնիսկ մտածում եք պարտության մասին՝ պարտությունը որբ չէ, ես եմ այդ պարտության տերը: Հաղթանակը ձերն է, բոլորինն է, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացունն է».*[35]

Այս ելույթը, նախորդներին նման լինելով, միաժամանակ տարբեր է, քանի որ ձևակերպվում է արդեն Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի առաջնորդի կողմից, ինչը նշանակում է, որ ելույթի հիմքում դրված մոտեցումները ոչ միայն քաղաքական դիսկուրս են ձևավորում, այլ դառնում են իշխանության գործունեության ինստիտուցիոնալ հիմք:

Ըստ այդմ, քաղաքացին և ժողովուրդը արդեն դե-յուրե ամբողջական իշխանություն ունեցող քաղաքական ուժի կողմից ներկայացվում են որպես իշխանություն:

Դիսկուրսի այս փոփոխությունը, բնականաբար, ազդում է տեքստի ու խոսույթի վրա: Հետագա ելույթները, փաստաթղթերը վկայում են այս ամենի մասին:

Կարելի է արձանագրել, որ խորհրդարանական ընտրություններում հաղթանակը քաղաքացուն բարձրացնում է ինստիտուցիոնալիզացիայի նոր մակարդակի, որը հիմնված է վերջինիս շահի կարևորման ու պետական քաղաքականությունում դրա հաշվառման սկզբունքի վրա: Ըստ այդմ, արդեն շեշտադրվում է հեղափոխության հավաքական կարևորությունը, ինչի մասին, խոսվում է օրինակ Գյումրիում անկացված ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառումներում: *«…ես համարում եմ, որ 2018 թվականի ապրիլ-մայիսին, Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցավ անկախության մի նոր*

[35]Վարչապետ Ն. Փաշինյանի եզրափակիչ ելույթը ՀՀ Ազգային ժողովում: 14.02.2020 https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/02/14/Nikol-Pashinyan-Final-Speech/

հանրաքվե և հարյուրհազարավոր այն քաղաքացիները, ովքեր դուրս եկան հրապարակ, դուրս եկան փողոցներ Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում՝ նրանք դուրս եկան նույնքան բարձր, նույնքան վճռական, նույնքան հաստատակամ «Այո» ասելու Հայաստանի Հանրապետության անկախությանը».[36]

Ամփոփելով, ներկայացնենք որոշ ընդհանուր դիտողություններ, որ բնութագրում են քաղաքական հռետորաբանությունն ու դրա փոփոխությունները ետհեղափոխական Հայաստանում։

Ա. 2018թ. «թավշյա հեղափոխությունը» երկու՝ սկզբունքորեն տարբեր համակարգերի բախման և դրանցից մեկի հաղթանակի հեղափոխություն էր. կլանային համակարգը, որի հիմնական նպատակը անձնային ու խմբային արտոնությունները պահպանելու նպատակով համակարգի վերարտադրությունն ապահովելն էր, պարտվեց քաղաքացու, քաղաքացիության ու իրավունքների իրացման հռետորաբանության վրա խարսխված հեղափոխական համակարգին։

Բ. Հետազոտությունը ցույց տվեց, որ մինչև Ս. Սարգսյանի հրաժարականը, քաղաքացու դիկսուրսը, որ ընկած էր հռետորաբանության հիմքում, դարձվեց հիմնականը, կարևորվեց ու դիտարկվեց որպես հեղափոխության հաղթանակի կարևորագույն նախապայման։ Հեղափոխության հաղթանակը, իր հերթին, ներկայացվեց որպես քաղաքացու վերադարձի գործողություն։

Գ. Դիսկուրսը ձևավորում, փոխում, ուղղորդում ու վերաուղղորդում էր Ն. Փաշինյանը, իսկ նրա համախոհների քաղաքական ելույթները, ըստ էության, ունեին լրացնող, փոխլրացնող գործառույթ։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դիսկուրսի ձևավորման «մենաշնորհը» Ն. Փաշինյանը պահեց նաև հետագայում, ըստ անհրաժեշտության շեշտադրելով, կարևորելով ու առաջին պլան մղելով ժամանակի, իրավիճակի ու կոնկրետ խնդիրների լուծման տեսանկյունից կարևոր հարցադրումներ։

Դ. Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ չնայած շահարկումներին, ընդդիմության քննադատությանը, 2018թ. ապրիլից մինչև 2020թ. մարտի կեսերն ընկած ժամանակահատվածում իշխանությունը հետևել է քաղաքացու կարևորման՝ իր հռչակած գաղափարներին ու դրան վերաբերող հարցադրումները կարևոր համարել գրեթե բոլոր հրապարակային ելույթներում ու փաստաթղթերում՝ Կառավարության ծրագրեր, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բազային փաստաթղթեր, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր։

[36]Ն. Փաշինյանի շնորհավորական ուղերձը ՀՀ Անկախության տոնի կապակցությամբ։ https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/09/21/Congratulatory-Message/ (ստուգվել է 10.09.2020)։

Ե. Ուսումնասիրությունը թույլ տվեց առանձնացնել քաղաքական հռետորաբանության ու դիսկուրսի փոփոխության երեք պայմանական ենթափուլ.

Առաջինը, որ ավելի զգայական է, որոշ առումներով ագրեսիվ, 2018 ապրիլից-ամառ ընկած ժամանակահատվածն է, երբ հեղափոխությունը հարմարվում է հաղթանակին ու «ժողովրդին, քաղաքացիներին» գերկարևորելով փորձում է նվազագույնի հասցնել Աժ-ում դեռևս մեծամասնություն ունեցող ՀՀԿ ներկայացուցիչների հնարավոր դիմադրությունը:

Երկրորդ փուլում քաղաքական հռետորաբանությունը դառնում է ավելի բալանսավորված, չնայած քաղաքացին ու ժողովուրդը դեռևս մնում են «հեղափոխության», անհրաժեշտության դեպքում՝ հրապարակային պայքարի համատեքստում:

Երրորդ փուլը մենք պայմանականորեն անվանում ենք «քաղաքացի, ժողովուրդ» հասկացությունների ինստիտուցիոնալիզացիայի փուլ, երբ վերջիններս ավելի բաանսավորված, ավելի հստակ ու որոշակի են ինչպես քաղաքական հռետորաբանությունում, այնպես էլ պետական քաղաքականության փաստաթղթերում:

Զ. Ուսումնասիրությունը բացահայտեց մարդաբանական/մշակութաբանական տեսանկյունից կարևոր ևս մեկ իրողություն. հանրային խոսքում, ուսումնասիրված ելույթներում ու փաստաթղթերում շատ դեպքերում ժողովուրդ և քաղաքացի հասկացությունները դիտարկվում են որպես համարժեք, այն դեպքում, երբ բովանդակային տեսանկյունից դրանք համարժեք չեն: այս դեպքում գործ ունենք հասկացությունների օգտագործման «ավանդույթի» հետ, երբ ժողովուրդ հասկացությունը գործածվում է որպես ազգ հասկացության համարժեք:

4.3 Ազգայինը, ազգայինի ու քաղաքացիականի համադրման դիսկուրսը: Բանակը՝ որպես ազգայինի ու քաղաքացիականի համադրման կարևոր ինստիտուտ:

Նորանկախ Հայաստանի պատմության բոլոր փուլերում, ազգային-հայրենասիրական հռետորաբանությունը, տեքստն ու նարրատիվը էական դեր են խաղացել գրեթե բոլոր քաղաքական ուժերի գործունեությունում: «Թավշյա հեղափոխությունից» հետո ազգայինը նույնպես քաղաքական հռետորաբանության ու օրակարգի կարևոր հարց է, չնայած բավականին փոխված են շեշտադրումները, ընկալումները: Ն. Փաշինյանի հանրային խոսքում անընդհատ փորձ է արվում ամրագրել ազգայինի՝ բովանդակային տեսանկյունից նոր ընկալում, որի հիմնական նպատակը ոչ թե ազգայինի ու քաղաքացիականի հակադրումն է, ինչպես դա արվել է նախկինում, այլ համադրումը: Նույնը վերաբերում է նաև բանակի դիսկուրսին. բանակը քաղաքական հռետորաբանությունը ևս կարևոր է, բավականին հաճախ շեշտադրվող, սակայն էապես տարբերվում են բովանդակային հարցադրումները:

Փաստաթղթերի, հրապարակային ելույթների ուսումնասիրության ընթացքում բացահայտվեց ետհեղափոխական զարգացումների, քաղաքական հռետորաբանության

դիսկուրսի վրա ազդող ևս մեկ կարևոր գործոն, որ առանցքային է Հայաստանի երրորդ հանրապետության գոյության ողջ ընթացքում. դա *քաղաքացիականի ու ազգայինի փոխհարաբերակցության, ազգայինի բանաձևման խնդիրն է,* որ ոչ միայն գիտական, ակադեմիական քննարկումներ է ձևավորել, այլ դարձել է հատկապես ազգայնական ուժերի շահարկումների հիմնական ռեսուրսը:

Ուսումնասիրությունը բացահայտեց, որ չնայած հեղափոխական հռետորաբանությանը, էյֆորիային, ընկալումների, ձևակերպումների հակասականությանը, ազգայինը բանաձևելու ու այն հեղափոխական դիսկուրս ներառելու խնդիրը միշտ կարևոր է եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և Ն. Փաշինյանի համար:

Ինչպես «քաղաքացի, ժողովուրդ» հասկացությունները, այն ևս մեկնաբանվել է տարբեր կերպ, որոշ դեպքերում՝ եղել են շահարկումներ, սակայն ազգայինի բանաձևումը քաղաքական հռետորաբանության հիմնական խնդիրներից մեկն է եղել: Ուսումնասիրության տարբեր փուլերում այս խնդիրը հստակ դիտարկվում էր, չնայած խոսքը, տեքստը տարբեր են՝ ***թիրախային լսարանից և իրադարձությունից կախված:***

Պետական, պաշտոնական արարողությունների, տոների, այլ նշանային իրադարձությունների առիթով ելույթները, ուղերձները նվազ ամբոխահաճո են, սակայն ժամանակ առ ժամանակ ուրվագծվում է հեղափոխությունը և իրադարձությունը նույն հարթության վրա դնելու իրողությունը:

Չնայած սրան, ելույթներում առկա է ազգայինի շուրջ դիսկուրսը հստակեցնելու, որոշակիացնելու ձգտումը, ի ցույց դնելով, որ նոր իշխանությունը դեռևս որոնումների մեջ է ազգայինի դե-յուրե ձևակերպումների հարցում:

Պաշտոնական հարթությունում ազգայինը ձևակերպելու խնդիրը, դատելով հռետորաբանությունից, նոր իշխանությունների համար կարևոր է, քանի որ նախանշում է պետականության զարգացումը, ըստ այդմ՝ քաղաքացու տեղը զարգացման տարբեր գործընթացներում: Մյուս կողմից՝ ազգայինը բանաձևելով ու հանրայնացնելով իշխանությունը թուլացնում է իր՝ «ապազգային, ազգային արժեքներին դեմ» լինելու վերաբերյալ հռետորաբանությունը, որ ակտիվորեն շահարկվում է հատկապես որպես ազգային դիրքավորվող, իրականում՝ ազգայնական տարբեր ուժերի կողմից:

Քաղաքական հռետորաբանության այս երկվությունը, հակասականությունը արտահայտված է հատկապես Պետական տոների կապակցությամբ ուղերձներում՝ Ազգային բանակի օրվա, Մայիսի 28-ի և Սեպտեմբերի 21-ի:

Մայիսյան հերոսամարտերի ուղերձում, օրինակ, «հեղափոխության» ներկայությունը հասցված է նվազագույնի, չնայած ոչ բացահայտ շեշտադրումներով որոշ հատվածներում այնուամենայնիվ առկա է. *«…Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև իր*

*պատմության վերջին չորս հարյուր տարում առաջին անգամ հույսը դրեց ոչ թե ուրիշների, **այլ ինքն իր վրա:** Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև հասկացավ, որ ազգային պետությունն է ինքնության ու արժանապատվության միակ երաշխիքը… Մենք հասկացանք, որ ազգային որևէ երազանք հնարավոր չէ ի կատար ածել առանց պետություն ունենալու, ինքնիշխանություն ունենալու, անկախություն ունենալու: Եվ անկախ պետությունը յուրաքանչյուր ազգային երազանք ի կատար ածելու առաջին անհրաժեշտ նախապայմանն է: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև ուներ Արամ Մանուկյանի պես նվիրյալ առաջնորդ, ով պատրաստ էր ոչ թե զոհել և վայելել իշխանության բարիքները, այլ կրել զրկանքներ և զոհվել հանուն սեփական ժողովրդի, ով պատրաստ էր հանուն իր ժողովրդի կռիվ տալ մինչև կյանքի վերջին վայրկյանները: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև ուներ այնպիսի զորահրամանատարներ, ինչպես Թովմաս Նազարբեկյանը, Դրոն, Մովսես Միլիկյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև որոշեց հաղթել: Հայ ժողովուրդը հաղթեց և դրանից հետո հայ ժողովուրդը հաղթել է բոլոր այն դեպքերում, երբ որոշել է, որ պետք է հաղթի, երբ հավատացել է ինքն իրեն, իր մտքին, իր բազկին, իր անցյալին և ապագային».*[37]

Այս ուղերձում կարևոր ու նշանային է երկու իրողություն.

Ա. հաղթանակի բովանդակային հիմնավորումը. հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև հասկացավ, որ… (կոնկրետ գործողություններ, որ կապվում են ժողովրդի որոշման հետ): *Նույն շեշտադրումները արդեն տեսել ենք հեղափոխության հաջողության վերլուծություններում:*

Բ. Արամ Մանուկյանի և զորահրամանատարների վարքագծի շեշտադրում, որ կապվում է հեղափոխության քարոզներից մեկի, այն է՝ պետական ծառայությունը որպես առաքելություն ընդունելու ավելի վաղ արտահայտած մտքերի հետ: *Սա ըստ էության, ներկայացվում է որպես պետական ծառայության ու պետական ծառայողի վարքականոն, որ այնքան կարևորվում էր ետհեղափոխական առաջին ամիսներին և որը աստիճանաբար թուլացավ:*

2018թ.՝ Անկախության տոնի ուղերձը հենց նույն համատեքստում է. «…*Անցած 27 տարիները եղան երբեմն դրամատիկ, երբեմն ողբերգական, երբեմն հերոսական տարիներ, հաճախ պսակվեցին բարդագույն խնդիրների փայլուն լուծումներով… Բայց մի բան մնաց աներեր եւ անկոտրում՝ մեր ժողովրդի կամքը: Անշեղ մնաց մեր ժողովրդի մղումը **դեպի ազատություն, դեպի ժողովրդավարություն, դեպի արժանապատվություն, դեպի անկախություն:** …Սիրելի ներկաներ, այսօրվա խոսքս ուզում եմ ամփոփել մի խորհրդանշական իրադարձության ազդարարմամբ: Այսօր՝ հենց հիմա, ՀՀ անկախության 27-րդ տարեդարձի առիթով՝ Բաղրամյան 26-ի դռները*

[37]Ն. Փաշինյանի շնորհավորական ուղերձը Հայաստանի առաջին Հանրապետության և Մայիսյան հերսամարտերի 100-ամյակի առթիվ: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/05/28/Prime-Minister-Nikol-Pashinyans-address/:

կբացվեն, ի նշան այն բանի, որ Հայաստանի իշխանությունն այլևս երբեք մեկուսացած ու կտրված չի լինի ժողովրդից…».[38]

Այս ելույթը նույնպես դեռևս ետհեղափոխական հռետորաբանության տրամաբանական շրջանի մեջ է: Մի կողմից՝ հաղթանակները, ինչպես այլ ուղերձներում ներկայացվում են որպես ժողովրդի կամ ժողովրդի մասնակցությամբ հաղթանակներ, մյուս կողմից ներկայացվում է նոր իշխանության առավելությունը, այն է՝ իշխանության վերադարձը ժողովրդին, որ այս անգամ ավելի քան խորհրդանշական է. *հանրային ընկալման մեջ որպես վտանգի օջախ դիտվող «Բաղրամյան 26»-ի դռները հրաշքով բացվում են ու մարդիկ այնտեղ «չար հերոսների» փոխարեն տեսնում են բարի հսկաներին, որ իրենց ազատել են կապանքներից ու վերադարձրել ազատությունը:*

Այս հռետորաբանությունը՝ ազգային արժեքների ու գործիչների շեշտադրմամբ ու կարևորմամբ, հետագայում արտահայտվում է ոչ միայն պետական տոների կապակցությամբ ուղերձներում, այլ ստանում նոր դրսևորումներ, երբ շեշտադրվում է ազգայինի ու քաղաքացիական զուգակցումը, մեկտեղումը:

Նման տեքստ է Մարտունի քաղաքի հիմնադրման 190-ամյակի միջոցառումների ժամանակ ելույթը. *«Ո՞րն է Հայաստանում տեղի ունեցած առանցքային փոփոխությունը: Ամենաառանցքային փոփոխությունն այն է, որ ձեզնից յուրաքանչյուրն այսօր Հայաստանի Հանրապետությունում իշխանություն է: Շատ դեպքերում ասում են, թե այս երկրում 3 մլն նախագահ, 3 մլն վարչապետ կա, և դա ասվում է որպես քննադատություն: Համաձայն չեմ դրա հետ և համարում եմ, որ երկրում 3 մլն վարչապետ լինելը ոչ թե թերություն է, այլ առավելություն: Դրանում է այն խոսքի իմաստը, երբ ասում ենք, որ դուք ՀՀ-ում իշխանություն եք: Նոր Հայաստանում վարչապետ լինելը վայելք չէ, այլ պատասխանատվություն, և երբ ասում ենք, որ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, հենց դա նկատի ունենք».*[39]

Այս արտահայտությունը կարևոր է, որովհետև հաղթանակի ու ժողովրդի, քաղաքացու կարևորության հեղափոխական դիսկուրսին ավելացնում է մեկ այլ՝ քաղաքացու պատասխանատվության դիսկուրսն ու ըստ էության, քաղաքացիության ընկալման նոր շեշտադրում. եթե բուն հեղափոխության և ետհեղափոխական առաջին ամիսներին շեշտադրվում էր հիմնականում հաղթանակի պաթոսը, ապա այժմ արդեն ավելացվում է պատասխանատվությունը հաղթանակի համար: Մարտունու ելույթը, ըստ էության, հայտարարում է, որ եթե ուզում եք լինել *վարչապետ, մեկը՝ 3 միլիոնից, ապա պետք է լինեք պատասխանատու:*

---

[38]Ն. Փաշինյանի ուղերձը անկախության տոնի առթիվ: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/09/21/Nikol-Pashinyan-congratulatory-message-Independence-Day/

[39]Վարչապետ Ն. Փաշինյանի ելույթը Մարտունի քաղաքի 190-ամյակի միջոցառմանը: 19.11.2019: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/11/19/Nikol-Pashinyan-visit-to-Gegharkunik/

Այն, միաժամանակ, անհատական պատասխանատվությունը, քաղաքացիական նկարագիրը ներկայացնում է որպես ազգայինի ու քաղաքացիականի զուգակցման, մեկտեղման կարևոր նախապայման, առանց որի հնարավոր չէ ազգային իղձերի իրականացումն ու ազգային պետականության հզորացումը։

Սա շատ կարևոր շեշտադրում է։ Այն դեռևս բավարար չափով բանաձևված չէ, մանրամասներ չի պարունակում, սակայն առաջարկում է ազգայինի նոր ընկալում։ Այն, եթե փորձենք խնդիրը դիտարկել նացիոնալիստական/ազգայինության տեսությունների համատեքստում, առաջարկում է քաղաքացիական ազգայինություն ի հակադրություն էթնիկ ազգայինության։

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս նրբերանգին բավարար ուշադրություն չի դարձվել և ընդդիմությունը շահարկելով «3 միլիոն վարչապետի» թեզը, այն կտրում է բովանդակությունից, ներկայացնում կամայական մեկնաբանությամբ։ Իրականում այն ազգային քաղաքացիականի կամ քաղաքացիական ազգայինի հետաքրքիր մոդել է, որ կարիք ունի զարգացումների, տեսական-մեթոդաբանական հիմնավորումների, տեղայնացման տարբեր մշակութային համակարգերում ու միկրոհամակարգերում։

Մարտունիի ելույթը նշանային է մեկ այլ առումով ևս։ Այն ցույց է տալիս, որ հեղափոխությունից ամիսներ անց Ն. Փաշինյանի ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար, չնայած ձևակերպված լինելուն, շարունակում է առաջնային մնալ ազգայինի դիսկուրսի որոնումն ու այն քաղաքացիականին ինտեգրելու կամ երկուսը զուգակցելու խնդիրը։

«…որովհետև մի ժողովուրդ ենք, ով Սիմոն Մարտիրոսյանի, Յուրի Վարդանյանի, Մոնթե Մելքոնյանի նման հերոսներ ունի: Մեզ անընդհատ բոլորն ամեն տեղից ուզում են համոզել, թե մենք փոքր ժողովուրդ ենք, խեղճ ժողովուրդ եք, յոլա գնացող ժողովուրդ ենք, բայց այսօր բոլորին ասում ենք, որ մենք այդպիսի ժողովուրդ չենք, այլ մեծ ժողովուրդ ենք: Հեղափոխության իմաստը հենց դա է: Ինքներս մեզ և աշխարհին ապացուցել ենք, որ մենք մեծ ժողովուրդ ենք հենց միայն պատճառով, որ արել ենք մի բան, որ աշխարհում մեզնից առաջ որևէ մեկն ի վիճակի չի եղել անել… Որևէ մեկը չփորձի ապացուցել, թե մենք խեղճ ժողովուրդ ենք. մենք հզոր ենք և հաղթած, որևէ մեկը չփորձի մեզ հետ խոսել կարեկցանքով, սպառնալիքով, քամահրանքով: Սա Նարեկացու ժողովուրդն է, սա Մաշտոցի, Մոնթե Մելքոնյանի, Մարշալ Բաղրամյանի, Տիգրան Մեծի ժողովուրդն է: Բայց մեր մեծությունը սկսում է նաև այնտեղից, որ մենք մեր հայրենիքում աղբը տեսնելիս կռանում ենք և վերցնում…»:[40]

Այս ելույթը ազգային և քաղաքացիական դիսկուրսների զուգակցման, դրանց համադրման միջոցով նոր դիսկուրս առաջադրելու փորձ է, կառուցված անհատական պատասխանատվության գաղափարի շեշտադրման վրա։

[40]Նույն տեղում։

Քաղաքական հռետորաբանության ազգային բաղադրիչը հասկանալու կարևոր նշանակություն ունի ետհեղափոխական Հայաստանում ***բանակի շուրջ դիսկուրսը:***

Հայաստանյան իրականությունում բանակի հանդեպ վերաբերմունքը եղել է ծնողի վերաբերմունք երեխայի նկատմամբ՝ խնամքի, գուրգուրանքի, հպարտության տարրերով շաղախված: Մյուս կողմից՝ բանակի թեման բոլոր իշխանությունների կողմից եղել է փակ, իսկ ընդդիմությունն իր հերթին կոռուպցիոն ռիսկեր, ոչ կանոնադրական հարաբերություններ ու այլ բացասական որակներ է վերագրել եթե ոչ բանակին ընդհանրապես, ապա գոնե օրվա քաղաքական ու ռազմական ղեկավարությանը:[41]

2019թ.՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման օրվա շնորհավորական ուղերձում Ն. Փաշինյանը փորձում է նոր երանգներ ավելացնել բանակի հանդեպ հասարակության վերաբերմունքում՝ ծնողական վերաբերմունքի փոխարեն առաջարկելով քաղաքացու վերաբերմունքի գաղափարը: Սա, ըստ էության, հեղափոխության համակարգային բնույթի դրսևորումներից է: Այն փաստում է, որ բանակին վերաբերող թեմաներն այլևս թաբու չեն հասարակության համար: Լայն առումով, այս ուղերձը նույնպես պետք է դիտարկել ազգայինի ու քաղաքացիականի համատեղման այն համատեքստում, որ առկա է Ն. Փաշինյանի տարբեր ելույթներում: *«Ի՞նչ է մեր ունեցած հայրենիքն այսօր: Մեր ունեցած հայրենիքն այն տարածքն է, որ գտնվում է սահմանին գտնված մեր զինվորի թիկունքում: Այսօր ունեցած մեր հայրենիքի ամեն քառակուսի մետրը շաղախված է մեր ազատամարտիկ զինվոր նահատակների արյունով…*

*…Այսօրվա մեր **հայրենիքն այսօր սահմանին կանգնած զինվորի թիկունքն է,** և մենք բոլորս պետք է ամեն օր մեզ հարց տանք՝ իսկ ինչո՞վ ենք մենք զբաղված զինվորի թիկունք հանդիսացող այդ հայրենիքում: Ինչո՞վ ենք զբաղված՝ կանգնած այն հողի վրա, որում ամփոփվում են մեր հազարավոր նահատակների մարմինները… …Եվ ես էլի ուզում եմ ընդգծել, որ յուրաքանչյուր տնտեսվարող, յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրեն հաշվի տա, որ որևէ չարձանագրված, չգրանցված ապրանք առաքելիս, առանց հսկիչ դրամարկղային կտրոնի որևէ գործարք անելիս ուղիղ, թե անուղղակի, ուզենալով, թե չուզենալով, գողանում է մեր բանակից և գողանում է մեր զինվորից»:*

Դիսկուրսի ու հռետորաբանության տեսանկյունից ևս այս հատվածը կարևոր է, հատկապես երբ խնդիրը տեղափոխում ենք իշխանություն-ընդդիմություն հարաբերությունների և նոր իշխանությունների՝ ապազգային լինելու մասին հայտարարությունների հարթություն:

Ընդդիմության՝ այս խնդրի շուրջ մոտեցումները հիմնականում շահարկում են՝ խոսքի ու տեքստի կամայական մեկնաբանության ճանապարհով: Այլապես, եթե

[41] Սրա վկայությունը նաև 2016թ.ապրիլյան պատերազմին հաջորդած ակտիվ քննարկումներն էին բանակի շուրջ: Հիշենք, թե ինչպիսի մեղադրանքներ էին հնչեցվում օրվա իշխանությունների հասցեին. հետախուզության ոչ բավարար աշխատանքից մինչև տանկերում վառելիք չլինելու:

առաջնորդվենք խոսքի՝ որպես դիսկուրս ձևավորող գործիքի բովանդակության վերլուծությամբ, կտեսնենք, որ այն արտահայտված ազգային է. ***հայրենիքն այսօր սահմանին կանգնած զինվորի թիկունքն է*** արտահայտությունը բովանդակային առումով նույնական է «սահման քաջաց զենք յուրյանց» արտահայտությանը և ըստ էության, հավանական ու հնարավոր է համարում այսօրվա սահմանների ընդլայնումը: Այլ հարց է, որ դա կարող է արվել դիսկուրս ձևավորելու կամ դիսկուրսի այս կամ այն տարրը ակտիվ պահելու նպատակով:

Հետագա ամիսներին և վարչապետ Ն. Փաշինյանը և կուսակցության այլ ներկայացուցիչները ավելի են ակտիվացնում ու խորացնում ազգայինի քննարկումները, անընդհատ այդ ամենի հիմքում դնելով հեղափոխության ու քաղաքացիության հետ կապերը: Նոր կազմով Ազգային ժողովին կառավարության ծրագիրը ներակայացնելու ամփոփիչ խոսքում ձևակերպվում է նաև ազգայինի՝ գոյություն ունեցողից տարբերվող դիսկուրսն ու արձանագրվում, որ նոր ու հին իշխանություններն այս հարցում ունեն սկզբունքային, համակարգային անհամաձայնություն.

«Այս թեման ընդհանրապես վերջին 8 ամիսներին անընդհատ շոշափվում է՝ ազգային, ապազգային, ազգային եկեղեցի, ազգային դպրոց և այլն: Այս հասկացություններում մենք պետք է շատ լուրջ ճշգրտումներ մտցնենք՝ այդ ի՞նչ է նշանակում: Ընդհանրապես, ես կարծում եմ, որ այն մարդիկ, ովքեր փորձում են Հայ առաքելական եկեղեցին պաշտպանել ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից, պետք է Հայ առաքելական եկեղեցու պատմությունը և որոշ կարևոր դրվագներ իմանան: Հիմա, օրինակ, ավանդական մտածողության մեջ Պապ թագավորը Հայ առաքելական եկեղեցու մեծագույն թշնամիներից մեկն է, բայց այսօր Հայ առաքելական եկեղեցի ունենք Պապ թագավորի շնորհիվ, որն ասաց՝ եղբայր, մենք պետություն ենք, մենք կարիք չունենք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնա, Կեսարիայում օծվի: Մենք երկիր ենք, ունենք թագավոր, ունենք մայրաքաղաք, ունենք հոգևոր դաս, և մեր կաթողիկոսը պետք է օծվի մեր հայրենիքում…

…Ազգային դպրոց ասելով մենք ի՞նչ նկատի ունենք: Ազգային դպրոցն այն է, որ մասնավորապես, Սերժ Սարգսյանի նկարը կախում են, ենթադրենք, դռները փակում են, որ երեխաները և ուսանողները երբևէ հանկարծ իրենց կարծիքը չկարողանան արտահայտել: Դա՞ է ազգային դպրոցը: Ո՞րն է ազգային դպրոցը: Այսօր մենք խոսում ենք, որ մեր երեխաները դպրոցն ավարտում են, բուհն ավարտում են առանց գիտելիքի, դա՞ է ազգային դպրոցն ու բուհը, երբ գալիս, ասում են՝ երեխան բարձրագույն կրթություն ունի, չի կարողանում աշխատանք ստանալ, ասում ես՝ քանի՞ օտար լեզու գիտի, դե ասում է՝ ռուսերեն մի քիչ խոսում է, անգլերեն մի քիչ խոսում է: Սա՞ է ազգային կրթությունը».[42]

Այս ձևակերպումները, շարունակելով վերը արդեն դիտարկված ելույթներն ու ուղերձները, ըստ էության շարունակում ու միաժամանակ ազգայինի նոր դիսկուրս են

[42]Վարչապետ Ն. Փաշինյանի եզրափակիչ ելույթը ՀՀ Ազգային ժողովում: 14.02.2020 https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/02/14/Nikol-Pashinyan-Final-Speech/

առաջարկում՝ հիմքում դնելով անհատական որակներն ու անձնի ինքնիրացման հնարավորությունը ոչ թե սոսկ կրթության, այլ բովանդակային տեսանկյունից մրցունակ կրթության արդյունքում:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ ինչպես քաղաքացի, քաղաքացիություն, այնպես էլ ազգ, ազգային, բանակ հասկացությունների բանաձևման փորձերի դեպքում ետհեղափոխական Հայաստանում մոտեցումները խարսխված են եղել բազային հասկացությունների նոր մեկնություն տալու, դրանց նոր բովանդակություն հաղորդելու մոտեցման վրա:

Ազգը, բանակը, կրթությունը, եկեղեցին, ինքնության համար կարևոր նշանակություն ունեցող այլ հասկացությունները ելույթների, տեքստի, ձևակերպումների ու մեկնաբանությունների մակարդակում ոչ թե դուրս են մղվում կամ վերածվում ապազգայինի կամ հակազգայինի, այլ բարձրացվում են նոր հարթություն, կապվում քաղաքացիականի հետ ու փորձ է արվում առաջարկել նոր մոտեցում ու մոդել:

Հիմնական խնդիրն այս հարթությունում այն է, որ ձևակերպումները բավարար չափով չեն հիմնավորվում, հանրայնացվում, չի տրվում դրանց գիտական հիմնավորումը:

Սա, բնականաբար, դառնում է և շարունակելու է դառնալ շահարկումների առիթ, հատկապես որ ազգայինի ու ազգայինության դիսկուրսի շուրջ ծավալվող բանավեճերը, ի տարբերություն այլ ոլորտների, որպես կանոն ավելի հեշտ են ենթարկվում զգայական, զգացմունքային գործոնների ազդեցությանը:

5. Եզրակացություններ

2018թ. թավշյա հեղափոխությանը հաջորդող շրջանում (մինչև 2020թ. մարտ) քաղաքական հռետորաբանության ուսումնասիրությունը և հատկապես մարդաբանական-մշակութաբանական առումների կարևորումը հնարավորություն տվեց հեղափոխությունը դիտարկել ոչ թե սոսկ որպես քաղաքական, այլ այնպիսի գործընթաց, որ հիմքում ուներ երկու տարբեր համակարգերի, մոտեցումների ու դրանցից ածանցված հռետորաբանությունների բախումը:

Մի կողմում համակարգն էր, որի հիմնական նպատակը սեփական վերարտադրությունը ապահովելն էր, մյուս կողմից՝ քաղաքացին, որի ինքնիրացման հնարավորությունների, իրավունքների անընդհատ սահմանափակման ճանապարհով էր միայն հնարավոր դառնում համակարգի և ՀՀԿ իշխանության վերարտադրությունը:

- Թավշյա հեղափոխության հաջողությունը պայմանավորեց «քաղաքացու», «ժողովրդի» վերադարձը քաղաքական գործընթաց, արդյունքում՝ այն դարձավ

մասնակցային և ընդհանուրի հաջողությունը պայմանավորվեց յուրաքանչյուրի մասնակցությամբ ու հաջողությամբ։

- Ապակենտրոն քաղաքացիական անհնազանդության պայմաններում, երբ քաղաքացին այլևս քաղաքականության օբյեկտից, գոնե բուն հեղափոխական գործողության ընթացքում վերածվում էր քաղաքականության սուբյեկտի, նախկին համակարգը չկարողացավ գտնել «քաղաքացու» դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ, քանի որ յուրացրել էր միայն մեկ կենտրոնում պայքարելու ռազմավարությունը։
- Քաղաքացու դիսկուրսը քաղաքական տեքստում, հռետորաբանությունում ուներ կոնկրետ, որոշակի բովանդակություն, որ անընդհատ շեշտադրվում ու կարևորվում էր շարժման առաջնորդ Ն. Փաշինյանի կողմից։ Հետագայում էլ Ն. Փաշինյանը շարունակեց հանդես գալ որպես դիսկուրս ձևավորող, կամ վերջինիս վրա ամենամեծ ազդեցություն ունեցող քաղաքական գործիչ։
- Ս. Սարգսյանի հրաժարականից ու հեղափոխության փաստացի հաղթանակից հետո դիսկուրսը շարունակում էր մնալ կարևոր, սակայն ենթարկվում էր որոշ փոփոխությունների, քանի որ ՀՀԿ-ի՝ Ազգային ժողովում փաստացի մեծամասնության պայմաններում հրապարակային պայքարը, ըստ այդմ՝ քաղաքացու մասնակցությունը այդ պայքարին հեղափոխության վերջնական հաղթանակը պայմանավորող հիմնական գործոնն էր։ Այս համատեքստում պետք է դիտարկվեն Ն. Փաշինյանի՝ ետհեղափոխական առաջին ամիսների բոլոր ելույթները, որոնց հիմնական «դերակատարները» քաղաքացին ու ժողովուրդն են, իրավունքների ու անելիքների կոնկրետ շեշտադրմամբ։
- Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ չնայած շահարկումներին, ընդդիմության քննադատությանը, 2018թ. ապրիլից մինչև 2020թ. մարտի կեսերն ընկած ժամանակահատվածում իշխանությունը հետևել է քաղաքացու կարևորման՝ իր հռչակած գաղափարներին ու դրան վերաբերող հարցադրումները կարևոր համարել գրեթե բոլոր հրապարակային ելույթներում ու փաստաթղթերում՝ Կառավարության ծրագրեր, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բազային փաստաթղթեր, «Իմ քայլը» դաշինիքի նախընտրական ծրագիր։
- Ուսումնասիրությունը թույլ տվեց առանձնացնել նաև քաղաքական հռետորաբանության ու դիսկուրսի փոփոխության երեք պայմանական ենթափուլ. *Առաջինը* 2018թ. ապրիլից-ամառ ժամանակահատվածն է, երբ հեղափոխությունը հարմարվում է հաղթանակին ու «ժողովրդին, քաղաքացիներին» գերկարևորելով

փորձում է նվազագույնի հասցնել ԱԺ-ում դեռևս մեծամասնություն ունեցող ՀՀԿ ներկայացուցիչների հնարավոր դիմադրությունը։

Երկրորդ փուլում քաղաքական հռետորաբանությունը դառնում է ավելի բալանսավորված, չնայած քաղաքացին ու ժողովուրդը դեռևս մնում են «հեղափոխության», անհրաժեշտության դեպքում՝ հրապարակային պայքարի համատեքստում։

Երրորդ փուլը «քաղաքացի, ժողովուրդ» հասկացությունների ինստիտուցիոնալիզացիայի փուլն է, երբ վերջիններս ավելի բալանսավորված, հստակ ու որոշակի են ինչպես քաղաքական հռետորաբանությունում, այնպես էլ պետական քաղաքականության փաստաթղթերում։

- Ետհեղափոխական շրջանում հետաքրքիր ու կարևոր զարգացումներ արձանագրվեցին նաև ազգայինի, ազգայինության և բանակի դիսկուրսի շուրջ։ Ազգային ընկալման ու բանաձևման հիմքում դրվում են անհատական որակներն ու անձի ինքնիրացման հնարավորությունը։
- Ազգ, ազգային, բանակ հասկացությունների բանաձևման փորձերի դեպքում ետհեղափոխական Հայաստանում մոտեցումները խարսխված են բազային հասկացությունների նոր մեկնություն տալու, դրանց նոր բովանդակություն հաղորդելու մոտեցման վրա։ Ազգը, բանակը, կրթությունը, եկեղեցին, ինքնության համար կարևոր նշանակություն ունեցող այլ հասկացությունները ելույթների, տեքստի, ձևակերպումների ու մեկնաբանությունների մակարդակում ոչ թե դուրս են մղվում կամ վերածվում ապազգայինի կամ հակազգայինի, այլ բարձրացվում են նոր հարթություն, կապվում քաղաքացիականի հետ ու փորձ է արվում առաջարկել նոր մոտեցում ու մոդել։

6. <u>Առաջարկություններ և շահառուներ</u>

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ետհեղափոխական Հայաստանում քաղաքական տեքստն ու քաղաքական հռետորաբանությունը, չնայած դրանցում *«քաղաքացի», «քաղաքացիություն» բազային հասկացությունների կարևորմանը,* ինչպես նաև *«ազգ», «ազգային», «բանակ» հասկացություններին նոր բովանդակություն հաղորդելու փորձերին,* դեռևս շարունակում են մնալ որոշ առումներով ոչ բավարար փաստարկված, հիմնավորված ու բանաձևված։ Որոշ դեպքերում տարբեր քաղաքական գործիչներ, երբեմն՝ նույն քաղաքական գործիչը տարբեր ելույթներում նույն հասկացությանը կարող են վերագրել տարբերվող բովանդակություն։

- Ըստ այդմ, ուսումնասիրության հիմնական շահառուն, քաղաքական տեքստ «արտադրող» ինստիտուտներն են, անհատները, ովքեր պատասխանատու են հատկապես վարչապետ Ն. Փաշինյանի, ինչպես նաև «Իմ քայլը» դաշինքի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների հանրային խոսքի բովանդակության համար. *խորհրդականներ, մամլո պատասխանատուներ, տեքստ պատրաստող մասնագետներ, կառավարությանն առընթեր գործող՝ հանրային կապերի ու տեղեկատվության տարբեր հիմնարկություններ ու այլ կառույցներ:*
- Վերջիններիս հիմնական անելիքը, որ կարևոր է հատկապես առաջիկա զարգացումներում, «ազգ», «քաղաքացի», «ազգային», «բանակ» ու շահարկման մեծ ներուժ ունեցող այլ հասկացությունների բովանդակության հստակեցումն է, այդ բովանդակությունների հանրայնացումն ու հանրային խոսքում այս ամենին հետևելը:
- Վերլուծությունում նշեցինք, որ դեռևս ոչ բավարար ու հստակ ձևակերպումներով, երբեմն հանդիպում են *քաղաքացիական ազգայինության ձևակերպումներ:* Դրանք, արդեն թվարկված շահառուների կողմից պետք է որոշակիացվեն, *հստակեցվեն, դիտարկվեն որպես համակարգային ու համակարգաստեղծ իրողություններ ու ըստ այդմ հանրայնացվեն՝ քաղաքական հռետորաբանության վրա ազդելու և վերջինիս կարևոր բաղադրիչ դառնալու նպատակով:* Այլապես, դատելով որոշ ելույթների բովանդակությունից, կա ազգայինի, ազգայինության ու բանակի բովանդակային ընկալումները էթնիկ ազգայինության հարթություն տեղափոխելու վտանգ, ինչն անում էին նախորդ իշխանությունները: Այս հարթությունում ցանկացած այլընտրանք, ընդունվածից տարբերվող կարծիք որակվում էր որպես ապազգային կամ հակազգային:
- Տեքստերի վերլուծությունը ցույց տվեց մեկ միտում ևս. Ն. Փաշինյանը, մնալով քաղաքական տեքստ գեներացնող ամենակարևոր խաղացողը, գուցե ոչ միտումնավոր, իր խոսքով, քաղաքական հռետորաբանությամբ սահմանափակում է հասկացությունների շուրջ բովանդակային բանավեճի հնարավորությունն այն դեպքում, երբ բազային հասկացությունների միանձնյա ձևակերպումը ոչ միայն շահարկումների հիմքեր է ստեղծում, այլ ինքը կարող է կառուցված լինել շահարկումների վրա: Այս պնդումն առարկայական ու հիմնավորված է, քանի որ վերլուծությունը ցույց տվեց քաղաքական հռետորաբանության՝ լսարանով, թիրախներով ու այլ իրողություններով պայմանավորված իրավիճակային բնույթը: Հասկացությունների՝ բովանդակային տեսնակյունից բանաձևված չլինելն ու այլընտրանքի բացակայությունը քաղաքական հռետորաբանությունը դարձնում են

աղքատիկ, իսկ քաղաքական գործընթացը՝ ոչ մրցակցային։ Հեղափոխությունը եղել է պայքար հենց այս ամենի դեմ, հետևաբար հենց դրա հետ կապված սահմանափակումներն են լուրջ վտանգ ներկայացնում նույն հեղափոխության համար։ Այս հարթությունում ևս վերը նշված հիմնական շահառուների անելիքները առարկայական են. *ապահովել հասկացությունների քննարկումների, տարբեր բովանդակությունների շուրջ բանավեճի, բազմակարծության ու հանդուրժողականության դաշտ, այսինքն՝ այն, ինչի համար տեղի է ունեցել հեղափոխությունը։*

- Շահառուները, ինչպես նաև քաղաքական գործընթացի մասնակիցները (վարչապետ, կուսակցության ու «Իմ քայլ»-ը դաշինքի ղեկավարներ) պետք է կարևոր համարեն նաև բազային հասկացությունների շուրջ միասնական, համաձայնեցված տեքստի կառուցարկումն ու հանրայնացումը, հասկացությունների՝ համաձայնեցված բովանդակության թիրախավորումը՝ քաղաքացու և քաղաքացիության ինստիտուտների հանրային ընկալման ընդլայնման, ինչպես նաև ազգայինի՝ էթնիկից քաղաքացիականի անցումն ապահովելու նպատակով։ Շահառու անհատների և ինստիտուտների անելիքն այս հարթությունում այդ փոխհամաձայնեցումն ապահովելն է, հանրային ընկալումների վրա ազդող գործիքակազմում բազային հասկացությունները և դրանց շուրջ դիսկուրսը ինտեսիվ ներառելը։
- Ընդհանրական առաջարկը որ բխում է ուսումնասիրության ընթացքից ու արդյունքներից, հետևյալն է՝ չնայած ետհեղափոխական Հայաստանի զարգացումների ու փոփոխությունների համակարգային բնույթին, այն բավարար չափով ներկայացված ու վերլուծված չէ։ Հեղափոխությունը դեռևս պետք է բրենդավորվի ոչ թե սոսկ որպես գործընթաց կամ գործողություն, այլ խորքային, համակարգային, աշխարհայացքային ազդեցությունների ու փոփոխությունների տեսանկյունից։

Հավելված 1. Հիմնական հետազոտական հարցադրումները

Հիմնական հետազոտական հարցերը վերաբերել են տեքստի, խոսքի և գործողությունների ուսումնասիրությանը.

1. «քաղաքացի», «ՀՀ քաղաքացի», «քաղաքացիություն»՝ որպես ինստիտուտ հասկացությունները՝

- պետական քաղաքականության փաստաթղթերում (2018-2020թթ. ընդունված *ՀՀ կառավարության ծրագրեր, ռազմավարական ծրագրեր, հայեցակարգեր, պետական քաղաքականության այլ փաստաթղթեր*)
- կուսակցական ծրագրային փաստաթղթերում *(կանոնադրություն, այլ կուսակցական փաստաթղթեր» կուսակցության, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրեր, այլ փաստաթղթեր):*

2. Քաղաքական գործիչների (վարչապետ Ն. Փաշինյան, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահ, «Իմ քայլը» դաշինքի խորհրդարանական խմբակցության ղեկավար) հանրային խոսքի համապատասխանությունը փաստաթղթերում արտացոլված դրույթներին։

- *Հանրային խոսքում ինչպես է ներկայացվում քաղաքացին.*
- *իրավունքների ու պարտականությունների ինչպիսի շրջանակ է նրան վերագրվում,*
- *որքանով են ձևակերպումներն իրավիճակային և որքանով՝ համակարգային։*

3. Քաղաքական գործիչների խոսքի համապատասխանությունը ոչ միայն «գրավոր» տեքստին, այլ միմյանց, այսինքն՝ որքանով է լայն առումով քաղաքական հռետորաբանությունը ներդաշնակ, խորքային ու բովանդակային, լայն առումով՝ թիմային։

4. Արդոք հանրային խոսքը տարբեր է ըստ լսարանների՝ ներքին լսարան, հասարակություն, արտաքին լսարան՝ միջազգային կազմակերպություններ, կառույցներ։ Եթե այո, ապա ինչով է պայմանավորված կամ ինչպես կարելի է բացատրել այդ տարբերությունները։

Ցանկ օգտագործված փաստաթղթերի և գրականության

1) Գրիգորյան Ս., Հայկական թավշյա հեղափոխություն, Եր., 2018:
2) Դեմիրճյան Մ., Թավշյա հղափոխություն. հայկական տարբերակ//http://ysu.am/files/2-1548137198-.pdf:
3) Թավշյա հեղափոխության խրոնիկան: https://www.youtube.com/watch?v=fRUQK4fxH5Y:
4) Թավշյա օրագիր. հեղափոխության 1-ին շաբաթը. https://www.youtube.com/watch?v=BZwcuii8a-A:
5) «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր (ԱԺ, 2018) http://geopolitics.am/archives/15500:
6) Հակոբյան Ս., Դիսկուրս անալիզի տեսություն. http://boon.am/diskursanalyse/
7) ՀՀ Կառավարության 2018թ. ծրագիր // https://www.gov.am/files/docs/2782.pdf:
8) ՀՀ Կառավարության 2019թ. ծրագիր//https://www.gov.am/files/docs/3133.pdf:
9) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, Եր., 2020: https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf
10) ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի ելույթը ՀՀ ազգային ժողովում՝ կառավարության ծրագիրը ներկայացնելիս: 12.02.2019: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/02/12/Nikol-Pashinyan-Speech-National-Assembly/
11) Ն. Փաշինյանի ելույթը Ազգային Ժողովում 2018թ. մայիսի 8-ին: https://www.aniarc.am/2018/05/08/nikol-pashinyan-8-may-2018/:
12) Ն. Փաշինյանի շնորհավորական ուղերձը Հայաստանի առաջին Հանրապետության և Մայիսյան հերսամարտերի 100-ամյակի առթիվ: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/05/28/Prime-Minister-Nikol-Pashinyans-address/:
13) Ն. Փաշինյանի ուղերձը անկախության տոնի առթիվ: 21.09.2018: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/09/21/Nikol-Pashinyan-congratulatory-message-Independence-Day/
14) Ն. Փաշինյանի շնորհավորական ուղերձը ՀՀ Անկախության տոնի կապակցությամբ: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/09/21/Congratulatory-Message/
15) Վարդազարյան Մ., Վարդազարյան Ե., Հայոց «թավշյա հեղափոխությունը» և ՀՀ-ՌԴ հարաբերությունների զարգացման դինամիկան// http://ysu.am/files/01M_Vardazaryan_E_Vardazaryan.pdf:
16) Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթն Ազգային Ժողովում կառավարության ծրագիրը ներկայացնելիս. 07.06.2018թ. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/06/07/Nikol-Pashinyan-Speech-National-Assembly/
17) Վարչապետի թեկնածու Ս. Սարգսյանի ելույթը Ազգային Ժողովի հատուկ նիստում: 17.04. 2018թ. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/04/17/parliament-speech/

18) Վարչապետ Ն. Փաշինյանի ելույթը Մարտունի քաղաքի 190-ամյակի միջոցառմանը: 19.11.2019: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/11/19/Nikol-Pashinyan-visit-to-Gegharkunik/
19) Վարչապետ Ն. Փաշինյանի եզրափակիչ ելույթը ՀՀ Ազգային ժողովում: 14.02.2020 https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/02/14/Nikol-Pashinyan-Final-Speech/
20) «Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ծրագիր» https://www.civilcontract.am/%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80:
21) М. Фуко, Археология знания, Санкт-Петербург, М., 2004.
22) Т. Ван Дейк, Дискурс и власть. Репрезентация доминирования в языке и коммуникации, М., 2013, էջ 14-15